

2021

«ԴԻԼԻՋԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿԻ «ԴԻԼԻՋԱՆ ՏԵՂԱՄԱՍ»
ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ 1 ՔԱՌԱԿՈՒՍՈՒ 6
ԱՆՏԱՌԱՄԱՍՈՒՄ ԱՆՏԱՌԱՊԱՏՄԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ
ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ
/լրամշակված/

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
Կ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ
Ա/Ձ Ա. ԳԱԼՈՅԱՆ

Ա/Ձ Ա. Գալոյան
ք. Երևան Սևանի 5
Հեռ. բջջ. +374 99 994222
galoyan.aram@gmail.com

ՀՀ



«ԴԻԼԻՉԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿԻ «ԴԻԼԻՉԱՆ ՏԵՂԱՄԱՍ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ 1
ՔԱՌԱԿՈՒՍՈՒ 6 ԱՆՏԱՌԱՄԱՍՈՒՄ ԱՆՏԱՌԱՊԱՏՄԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱԿԱ ՍԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՑ
/լրամշակված/

Կ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Ա/Ձ ԱՐԱՄ ԳԱԼՈՅԱՆ



Երևան 2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	4
1.1	Ձեռնարկողի մասին տեղեկություն	4
1.6	Հապավումներ	4
1.7	Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը	5
1.8	Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)	7
1.8.1	<i>Նախատեսվող գործունեության նկարագիր</i>	7
1.8.2	<i>Գլխավոր հատակագիծ , ծառերի տնկման սխեմա</i>	9
1.8.3	<i>Իրադրային հատակագիծ</i>	10
2.	ԱՆՏԱՌԱՊԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ	12
3.	ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ	12
3.1	<i>Կանաչ տարածքի ռոռզման ջրապահանջի հաշվարկ</i>	13
4.	ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՑ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ	14
4.1	Նախատեսվող գործունեության տարածքի ֆիզիկա-աշխարհագրական նկարագիրը և լանդշաֆտը	14
4.2	Տարածքի ինժեներատրամադրական պայմանները	15
4.3	Զրագրություն	16
4.4	Կլիմայական պայմաններ	18
4.5.1	Օդերևութաբանական-կլիմայական պայմանները	18
4.5.1.1	Ընդհանուր ֆոնային կլիմայական բնութագիրը	18
2.1	Անտառ	25
2.2	Կենսաբազմազանություն	26
2.2.1	Բուսական աշխարհ	26
2.2.2	Կենդանական աշխարհ	27
2.2.3	Բուսական աշխարհի պահպանության միջոցառումներ	28
2.2.4	Կենդանական աշխարհի պահպանության միջոցառումներ	30
2.3	Օդային ավազան	31
2.3.1	Ֆոնային աղտոտվածություն	31
2.4	Մոցիալ-տնտեսական արդի վիճակը	31
2.4.1	Տեղական տնտեսության կառուցվածքի վերլուծություն	32
2.4.2	Արդյունաբերություն և առևտուր	33
2.4.3	Համայնքի զարգացման ծարգիր	33
2.4.4	Զբոսաշրջային ենթակառուցվածք	34
2.5	Բնության հուշարձաններ	37
2.6	Կենսաբանական հուշարձաններ	37
2.7	Բնական և մշակութային ժառանգություն	38
5	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ՄԵՂՄԱՅՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ	39
	ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ	42
	ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	37
	ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	38

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 Ձեռնարկողի մասին տեղեկություն

1.2 Ձեռնարկող`	Կ. Վարդանյան (անձնագիր` BA3153050, տրված` 15.01.2018թ., 006-ի կողմից)
1.3 Ձեռնարկողի հասցեն`	ք. Երևան, Բայրոնի 3, բն. 36
1.4 Նախատեսվող գործունեության հասցեն`	ՀՀ Տավուշի մարզ, «Դիլիջան» ազգային պարկի «Դիլիջան տեղամաս» մասնաճյուղի 1 քառակուսու 6 անտառամաս
1.5 Հեռախոս`	+37499441014

1.6 Հապավումներ

ՀՀ` Հայաստանի Հանրապետություն

ՓԲԸ` Փակ Բաժնետիրական Ընկերություն

ՄՊԸ` Սահմանափակ պատասխանատվությամ ընկերություն

ՊՈԱԿ` պետական ոչ առևտրային կազմակերպություն

1.7 Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

Գործունեության նպատակն է իսկանացնել «Դիլիջան» ազգային պարկի «Դիլիջան տեղամաս» մասնաճյուղի 1 քառակուսու 6 անտառամասում անտառապատման աշխատանքներ:

2014թ.-ի հունիսի 21-ի "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

Անտառապատման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտը մշակված է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի պահանջներին համաձայն:

Բնապահպանական ազդեցության գնահատման այս զեկույցը նկարագրում է գործունեության ենթակա տարածքի բնապահպանական ելակետային պայմանները, գործունեության իրականացման համար նախատեսվող աշխատանքները և գործողությունները, գործունեության իրականացման արդյունքում բնապահպանական հնարավոր ազդեցության շրջանակը և գնահատականը: Բնապահպանական ազդեցության գնահատումը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

Սկսած 1991թ. շրջակա միջավայրի պահպանությանն առնչվող ավելի քան 25 օրենսգրքեր և օրենքներ, բազմաթիվ ենթաօրենսդրական ակտեր և կանոնակարգեր են ընդունվել:

Շրջակա միջավայրի պահպանության հարցերին առնչվող ՀՀ օրենքների ցանկը ներկայացված է ստորև.

- Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին (1992),
- Մթնոլորտային օդի պահպանության մասին (1994),
- Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին (2014),
- Պատմական և մշակութային անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին (1998),
- ՀՀ հարկային օրենսգիրք (ՀՕ-165-Ն, 01.01.2018թ.)

- «ՀՀ Բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 14.08.2008 N 967-Ն որոշում
- «Բուսական աշխարհի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, 1999թ., ՀՀ կառավարության 29.01.2010թ.
- Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին (2006),
- Կենդանական աշխարհի մասին (2000),
- ՀՀ հողային օրենսգիրք (2001),
- Բնապահպանական կրթության մասին (2001),
- ՀՀ ջրային օրենսգիրք (2002),
- ՀՀ ընդերքի մասին օրենսգիրք (2011),
- Թափոնների մասին (2004),
- Բնապահպանական մոնիտորինգի մասին (2005),
- Բնապահպանական վերահսկողության մասին» (2005),
- Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին (2006),
- ՀՀ անտառային օրենսգիրք (2005),
- ՀՀ Կառավարության «ՀՀ կենդանիների Կարմիր գրքը հաստատելու մասին» 29.01.2010թ. N 71-Ն որոշում,
- ՀՀ Կառավարության «ՀՀ բույսերի Կարմիր գրքը հաստատելու մասին» 29.01.2010թ. N 72-Ն որոշում,
- ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ «ԴԻԼԻՋԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿԻ 2017-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
- ՀՀ կառավարության 2017 թվականի փետրվարի 23-ի N8 արձանագրություն
- «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» ՀՀ Կառավարության 31.07.2014թ. N 781-Ն որոշում
- Հրաման N2-III-11.3 «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» սանիտարական նորմերը հաստատելու մասին: Ուժի մեջ է մտել 13.04.2002թ:
- Հաշվի են առնվել նաև`
- ՀՀ կառավարության 2014թ. սեպտեմբերի 25 որոշումը «ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության եվ օգտագործման բնագավառում պետական ծրագիրը եվ միջոցառումները հաստատելու մասին»
- ՀՀ կառավարության 2015 թ. դեկտեմբերի 10-ի նիստի «ՀՀ կենսաբանական բազմազանության պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման բնագավառներում ռազմավարությանը և գործողությունների ազգային ծրագրին հավանություն տալու մասին» N54 որոշում
- ՀՀ կառավարության 2015թ. մայիսի 27-ի նիստի «ՀՀ անապատացման դեմ պայքարի ռազմավարությունը և գործողությունների ազգային ծրագրին հավանություն տալու մասին» N23 արձանագրային որոշումը:

1.8 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)

1.8.1 Նախատեսվող գործունեության նկարագիր

Անտառապատման ենթակա տարածքը գտնվում է Տավուշի մարզ, Դիլիջան քաղաք «Դիլիջան» ազգային պարկի «Դիլիջան տեղամաս» մասնաձյուղի 1 քառակուսու 6 անտառամասում:

Սույն ներդրումային ծրագրի հիմնական նպատակը բնապահպանական անվտանգության ապահովումն է և կանաչապատ տարածքների ընդլայնումն ու զարգացումը:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել ծառատունկ, մասնաորապես առաջիկա 10 տարվա ընթացքում կտնկվեն 200-ից ավել ծառեր, որում բացի տվյալ տարածքի բնակլիմայական պայմաններին համապատասխանող ավանդական ծառատեսակներից, հողի անհրաժեշտ հատկության դեպքում, հավանական է լինեն նաև ծաղկող ծառեր: Հարկ է նշել, որ առավել ուշադրություն է դարձվելու տնկիների նկատմամբ, որոնք պետք է լինեն բավական կենսունակ, հաստ տրամագծով, ուղղաձիգ առանցքով և բարձր հասակով:

Հողամասի հիմնական մակերեսը, համաձայն վարձակալության վկայականի՝ կադաստրային ծածկագիր 11-003-0623-0049, կազմում է 1.9 հա:

Նպատակային նշանակությունը՝ անտառային

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ անտառ

Գրանցված իրավունքի տեսակը՝ վարձակալություն

Տարածքը լեռնային է, միջին լանջ՝ 15-20 աստիճան թեքությամբ, հյուսիս արևմտյան դիրքադրության, կենսաբանական նոսրուտ, անտառային տիպը տարախոտային, ծառուտի կազմը՝ կաղնի, թխկի, հացենի, ենթանտառ՝ մասրենի միջին, ծովի մակարդակից բարձրությունը 1280 մ, հողը՝ կավաավազային միջին հզորության:

Նշված տարածքի վրա կփորվի 200 փոս: Փոսերը կփորվեն ձեռքով՝ 0.7x0.7x0.7մ չափերով:

Անտառապատման աշխատանքները կկատարվեն հետևյալ տեսակային կազմով՝ կաղնի, թխկի, հացենի, լոբենի, հաճար, բոխի, կաշտան և թեղի: Յուրաքանչյուր ծառատեսակից 25 հատ: Կտնկվեն 2-3 մետր բարձրության տնկիներ:

Տնկման ժամանակ կիրականացվեն հետևյալ աշխատանքները՝ տնկիների նախապատրաստում, արմատների և սաղարթի ձևավորում, տեսակավորում: Տնկիների արմատները կմշակվեն հողի և գոմաղբի մածուկով:

Ծառերի տնկումից հետո կիրականացվեն խնամքի աշխատանքներ՝ տնկիների շրջակայքում հողի փխրեցում և մոլախոտերի հեռացում: Չոր եղանակային պայմանների դեպքում կիրականացվեն համապատասխան խնամք:

Կախված տնկիների աճման արագությունից, վիճակից (տնկիների վատ համակցություն) և չոր եղանակային պայմաններից՝ խնամքի աշխատանքների քանակը կարող է ավելանալ:

Չորացած տնկիների դեպքում կիրականացվի լրացում, որի ժամանակ կկատարվեն հետևյալ աշխատանքները՝ փոսերի փորում, տնկիների նախապատրաստում, ծառերի մոտեցում և տնկում:

Անտառապատման աշխատանքների արդյունքում վերը նշված տարածքը կունենա հետևյալ դրական բնապահպանական նշանակությունները՝

- բնապահպանական;
- ջրապաշտպանական;
- կլիմայակարգավորիչ;
- շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների մեղմացման:

Տնկումների արդյունքում ձևավորվող անտառային մշակույթները կնվազեցնեն փոշու պարունակությունը օդում, մեղմացնելով համայնքի կլիման, ինչպես նաև կնվազեցնեն օդի չորությունը: Դրանք իրար կմիացնեն առանձին անտառահատվածները, ստեղծելով մեկ միասնական անտառ կամ անտառաշերտեր, որտեղ կենսաբազմազանության մաս կազմող միկրոօրգանիզմները, սնկերը, բույսերը, կենդանիները կկարողանան կայուն ձևով գոյատևել, իսկ կենդանիները նաև անարգել կատարել միգրացիաներ համայնքի տարբեր անտառահատվածներում:


Անձնակազմի կոմունալ – կենցաղային կարիքների համար տարածքում նախատեսվում է տեղադրել ժամանակավոր բիոզուգարան, որը ծառատնկման աշխատանքերը ավարտելուց հետո կապամոնտաժվի:

Խմելու և կենցաղային կարիքների համարը ջուրը կմատակարարվի մասնագիտացված ընկերության կողմից, պայմանագրային հիմունքներով:

Իրականացվող աշխատանքների ընթացքում կպահպանվեն Առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները:

Ստորև ներկայացված են անտառապատման համար ընտրված տարածքի քարտեզները:


1.8.2 Գլխավոր հատակագիծ, ծառերի տնկման սխեմա



1.8.3 Բրադրային հատակագիծ



1.8.4 Տարածքի ոռոգման սխեմա



2. ԱՆՏԱՌԱՊԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Անտառապատման աշխատանքների ողջ ընթացքում անհրաժեշտ է ապահովել՝

- համապատասխան մասնագետների (առնվազն երկու անտառագետ) և տեխնիկայի (մարդկանց փոխադրելու համար անհրաժեշտ տրանսպորտային միջոց, հենասյուների տեղադրման համար հորատիչ սարք, անվավոր տրակտոր և այլն) առկայությունը;
- անտառտնկման աշխատանքների ժամանակ օգտագործել բարձրորակ տնկանյութ;
- երկու տարեկան սերմնաբուսակների բարձրությունը՝ 30 սմ-ից ոչ պակաս, արմատային համակարգը լավ զարգացած;
- առաջին տարում ապահովել անտառմշակույթների կաշտոնականությունը առնվազն 60 %;
- նախագծի իրականացման ավարտին 1 հա-ի հաշվով ապահովել՝
 - ծառերի՝ առնվազն 60% պահպանվածություն,
 - ծառերի հավասարաչափ բաշխվածություն՝
 - ծառերի միջին բարձրությունը 1.5 մ-ից ոչ պակաս:

3. ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Անտառապատման տեղամասի ռելիեֆային բարդ պայմաններում, ինչպես ցույց տվեցին հիդրավլիկական հաշվարկները, շիրթային կամ ակոսային ոռոգում գործնականու հնարավոր չէ իրականացնել տեխնիկական խիստ բարդությունների և տնտեսական մեծ ծախսերի պատճառով: Հաշվի առնելով վերոհիշյալը տեղամասի համար ոռոգման հնարավորինս արդյունավետ եղանակ ընտրվեց կաթիլային ոռոգումը:

Շատ կարևոր ենք համարում ընդգծել, որ ռելիեֆային առկա բարդ պայմաններում ռետինե բաժանարար խողովակները (դրանց տրամագիծը 16 մմ է) պետք է ապահովեն նախագծում նշված պարամետրերը, մասնավորապես, բաժանարարներում ճնշման 10-12 մ փոփոխությունների պայմաններում դրանց վրա տեղակայված կաթոցիկներն կարողանան ապահովել բավարար կայուն ելք:

Ոռոգման համար ջուրը կներկրվի մասնագիտացված ընկերության կողմից և կպահեստավորվի հատուկ նախատեսված բաքերում: Ներկրվող ջուրը լողացող օտար

մարմիններից (ցելոֆոն, ջրիմուռ և այլն) ազատելու համար ջրի բաքերի վրա կնախատեսվի 5x5 մմ չափի անցքերով ցանցային քամիչ թաս: Դա կապահովի պոմպի, քամիչների, կաթոցիկների և մյուս հանգույցների անխափան աշխատանքը:

Անտառատնկման աշխատանքներից առաջ բոլոր տեղամասերում պետք է նախապես փորել խրամուղիներ և տեղակայել բոլոր բաժանարար պոլիէթիլային խողովակներն իրենց հանգույցներով: Անտառապատումից հետո միացվելու են կաթոցիկներով ռետինե խողովակները, ամրացվելու մետաղե ցցերով (սխեման տես գծագրերում) և խրամուղիները լցվելու փափուկ գրունտով:

3.1 *Կանաչ տարածքի ռոռզման ջրապահանջի հաշվարկ*

Կանաչապատ տարածքի 1 մ²-ի մեկ ռոռզման համար ջրի ծախսի նորման կազմում է 4-6 լ/ մ²:

Տեղանքի շոգ կլիմայական պայմանների համար ընդունում ենք առավելագույն արժեքները.

զազոնների ռոռզում՝ $n_6 = 0.006 \text{ մ}^3/\text{մ}^2$

Ռոռզման համար ջրապահանջը որոշվում է՝

$$W_{u.3} = (n_6 \times S) \times K \times t$$

որտեղ՝ S – ռոռզվող տարածքի մակերեսն է, $S_1 = 19000 \text{ մ}^2$,

K – ռոռզման օրական հաճախականությունն է, $K = 1$

t - ռոռզման օրերի պլանավորված թվաքանակն է, $t = 175 \text{ օր}$

$$W_{u.3} = (0.006 \times 19000) \times 1 \times 175 = \underline{19950} \text{ մ}^3/\text{տարի}$$

4. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅՂ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԽԵՄԱՆ

4.1 Նախատեսվող գործունեության տարածքի ֆիզիկա-աշխարհագրական նկարագիրը և լանդշաֆտը

Անտառապատման ենթակա տարածքը գտնվում է Տավուշի մարզ, Դիլիջան քաղաք «Դիլիջան» ազգային պարկի «Դիլիջան տեղամաս» մասնաձյուղի 1 քառակուսու 6 անտառամասում:

Հետազոտվող տարածքը գտնվում է Աղստև գետի միջին հոսանքում և աչքի է ընկնում բարդ երկրաբանական կառուցվածքով: Այն ներկայացված է տեսաձևային քարտեզի վրա: Քաղաքի տարածքում և դրա շրջակայքում լայն տարածում են գտել սողանքային երևույթները, սելավները, փլզումները և այլ վտանգավոր երկրաբանական երևույթներ, որոնք բավական մեծ վնաս են պատճառում քաղաքի տնտեսությանը և ռեկրեացիոն համալիրին:

Մորֆոստրուկտուրային տեսանկյունից ուսումնասիրվող տարածքը համարվում է Դիլիջանի իջվածքի հյուսիսային թևի մասը, որն իրենից ներկայացնում է Դիլիջանի գրաբենի հյուսիսային լանջը՝ ունենալով դեպի հարավ նշանակալի թեքություն:

Ուսումնասիրվող տարածքի հյուսիսային մասը սահմանափակվում է Աղստև գետի հյուսիսային վերողոդահունային դարավանդներով: Տեղանքի ժամանակակից ռելիեֆի միջին թեքությունը կազմում է 150-250: Տարածքում լայն տարածում ունեն սողանքավտանգ տեղամասերը: Ռելիեֆի բացարձակ նիշերը տատանվում են 1270 մ-ից մինչև 1380 մ:

Տարածքի գեոմորֆոլոգիական բնութագիրը հիմնականում պայմանավորված է Աղստև գետի հովիտով, որի կառուցվածքը սիմետրիկ է և ունի մոտ ութ դարավանդներ: Ուսումնասիրված տարածքը գտնվում է գետից մինչև 70 –80մ բարձրության վրա, որտեղ տեղակայված է գետի հինգերորդ դարավանդը: Առաջին դարավանդը զբաղեցնում է գետի ավային մասը (ողողադաշտը) և ունի մինչև 1մ բարձրություն: Երկրորդ դարավանդի բարձրությունը գետի մակարդակից բարձր է մոտ 10-15 մ, երրորդ, չորրորդ և հինգերորդը համապատասխանաբար ունեն 20-40, 40-60 և 60-80 մ բարձրություններ:

Դարավանդների առկայությունը և նրանց ռելիեֆների ձևավորումը պայմանավորված է երկրաբանական գործընթացներով, որոնք տեղի են ունեցել սկսած Էոցենից մինչև ժամանակակից դարաշրջանը ներառյալ: Տարածքում տեղի են ունեցել ակտիվ տեկտոնական պրոցեսներ (վերին օլիգոցեն-ներքին միոցեն), որի ժամանակ առաջացել են զգալի ծալքաձևավորումներ և հզոր հրաբխային ժայթքումներ: Տարածքի ռելիեֆի հետագա ձևավորումը հիմնականում պայմանավորված է Էկզոգեն պրոցեսներով: Վերջնականորեն Էնդոգեն և Էկզոգեն գործոնների բարդ փոխազդեցությունը ձևավորել է տարածքի ներկա ռելիեֆի տեսքը, որտեղ զգալի են նաև սողանքային երևույթների հետևանքները:

Երկրաբանական պայմանները. ուսումնասիրվող տարածքը պատկանում է Կրասնոսելսկ-Դիլիջան սինկլինալային գոտուն, գտնվում է Ձկնագետ-Ֆիոլետովո-Վերին Չիչխան անտիկլինալից հյուսիս և հանդիսանում է Շիրակ-Սևան սինկլինորիումի խոշոր կառուցվածքային տարրերից մեկը:

Սինկլինալի առանցքային գիծն ունի հյուսիս-արևմտյան տարածում:

Երկրաբանական կառուցվածում (վերնից ներքև) հանդիպում են չորրորդական և ժամանակակից գետային նստվածքներ: Առաջին հերթին դրանք դարավանդային նստվածքներն են, որոնք զբաղեցնում են գետահովտի տարածքը:

Ավելի խորը հանդիպում են երրորդական (Էոցենի) հասակի հրաբխածին ապարներ, որոնք ներկայացված են հիմնականում տուֆաբրեկչիաներով, անդեզիտներով և պորֆիրիտներով: Այստեղ լայն տարածում ունեն այդ ապարների փոփոխված, հողմնահարված և ճեղքավոր տարատեսակները:

Ուսումնասիրված տեղամասում ավելի խորքային ապարները Ադստև-Բլդրան գետերի ջրբաժան հատվածներում ներկայացված են ինտրուզիվ ապարներով, որոնք հատում են Էոցենի հրաբխածին համալիրը և ներկայացված են պորֆիրիտներով նրանց տուֆերով և տուֆաբրեկչիաներով:

Տեկտոնական տեսանկյունից ուսումնասիրված տարածքն ունի բավականին բարդ կառուցվածք:

Առանձին մասնագետներ նշում են, որ Ադստև գետի ուսումնասիրված հատվածը պատկանում է լայնածավալ սինկլինալի և կազմված է հիմնականում Էոցենի հրաբխածին ապարներից: Փաստերի առկայությունը, ինչպիսիք են հին դարավանդների տեղակայումը համեմատաբար բարձր նիշերի վրա, առանձին տեղերում հին թաղված լճային նստվածքները (որոնք տեղակայված են թաղված գոգավորություններում) թույլ են տալիս անել եզրահանգում տեղամասի զգալի տեկտոնական շարժումների վերաբերյալ:

Դրանք տեղի են ունեցել հիմնականում չորրորդական ժամանակահատվածում: Շրջանում հայտնի է նաև զգալի խախտումների համալիր ցանց, որի հիմնական ուղղությունը հանդիսանում է հյուսիս-արևմուտք - հարավ-արևելք ուղղությունը:

4.2 Տարածքի ինժեներաերկրաբանական պայմանները

Ուսումնասիրված տարածքում կարելի է առանձնացնել գեոմորֆոլոգիական հետևյալ էլեմենտները՝ ալյուվիալ պրոլյուվիալ ակումուլյատիվ հարթավայր, մակերևույթի թեքությունը չի գերազանցում 10° թեք լանջեր, ձորակներ, ողողահուններ, սելավատարներ:

Ուսումնասիրված տարածքում ֆիզիկաերկրաբանական երևույթները ներկայացված են մակերևույթային համատարած լվացումով մակերևույթային տեղումներով: Մակերևույթային էռոզիան լավ նկատելի է թեք լանջերի վրա: Գարնանային և աշնանային անձրևների ժամանակ առաջանում են հեղեղատներ:

Տարածքի երկրաբանալիթոլոգիական կառուցվածքը ըստ նախկինում տարբեր կազմակերպությունների կողմից փորված հորատանցքերի տվյալների ներկայացված է հետևյալ շերտերով՝

շերտ թիվ 1. Ավազակավային գրունտ խճավազի պարունակությամբ (10)-(20) տոկոս, կիսապինդ և ձիգ պլաստիկ թանձրության: Հզորորությունը տատանվում է (1.2) - (2.8) մետր:

շերտ թիվ 2. Կավավազ բաց և մուգ մոխրագույն, գորշավուն երանգով, պինդ և փափուկ պլաստիկ թանձրության մինչև (35) տոկոս քարակտորների պարունակությամբ, փոշենման ավազի ենթաշերտերով հաճախակի կարբոնատային և աղային, տարածքում կավավազները ներկայացված են նաև գերնստող տարատեսակով:

Հզորությունը տատանվում է (1.8) – (4.3) մետր:

Չերտ թիվ 3. Ճալաքարա-կոպճային գրունտ, մանրազլաքարերի պարունակությամբ, ավազային և կավավազային լցնով մինչև (10)-(30) տոկոս:

Չերտ թիվ 4. Խճա-մանրախճային գրունտ մեծաբեկորների պարունակությամբ, ավազային և կավային լցանյութով մինչև (30)-(35) տոկոս, քարաբեկորները ներկայացված են հրաբխային ապարներով, կավերի և ավազների ենթաշերտերով և ոսպնյակներով: Հզորությունը տատանվում է (2.3)– (4.5) մետր:

Չերտ թիվ 5. Բեկորախճային գրունտ տեղ-տեղ թույլ և միջին հղկվածության ճալաքարակոպճային կազմով, կապտականաչավուն և մոխրագույն ավազակավային լցնով մինչև (10)-(30) տոկոս, խիտ և միջին խտացվածության, թույլ խոնավ: Բացահայտված հզորությունը (15.0) մետր:

Չերտ թիվ 6. Մանրախճային, խճավազային գրունտ կավավազային լցնով մինչև (20)-(30) տոկոս, որոշ մասերում առանձին մանրաբեկորներով:

Չերտ թիվ 7. Պորֆիրիտ մոխրագույն, ճեղքավորված:

Գրունտային ջրերը փորված հորատանցքերով Աղստև գետի հովտում բացահայտվել են (12.0)-(3.0) մ խորություններում, լանջերի վրա՝ (10.0)-(15.0) մ խորություններում:

Գրունտների ֆիզիկա-մեխանիկական հատկանիշների ուսումնասիրման համար օգտագործվել են Տարածքի երկրաբանալիթոլոգիական կտրվածքին մասնակցող գրունտների հետևյալ տարատեսակները.

Կավային գրունտներ (Չերտեր թթ. 1, 2)

Կոպճային գրունտներ (Չերտեր թ. 3, 4)

Ժայռային գրունտներ (Չերտ թ. 5)

Գրանցումները կատարվել են սեյսմիկ զոնդավորման մեթոդով երկայնական առաձգական ալիքների տարածման արագությունների որոշման նպատակով:

4.3 Ջրագրություն

Աղստևը տարածքով հոսող ամենախոշոր գետն է: Այն սկիզբ է առնում Փամբակի լեռնաշղթայի հյուսիսային լանջերին: Սկզբում մի փոքրիկ առվակ է, սակայն Դիլիջանի մոտ հորդանալով դառնում է ջրառատ գետ: Մնվում է գերազանցապես ձնհալքից և անձրևաջրերից: Վտակներից հայտնի են Գետիկը և Ոսկեպարը, որոնցից առաջինը հոսում է Միափորի և Արեգունի լեռների միջև ընկած կիրճով: Խորությունը մեծ չէ, սակայն վարարումների ժամանակ դառնում է խիստ վտանգավոր:

Երկարությունը 133 կմ է, այդ թվում Հայաստանում 99 կմ: Ջրի ծախսը՝ 8,22 խմ/վ, հոսքը 256 միլիոն խմ:

Մինչև Գետիկ վտակին խառնվելն այն հոսում է հարավ-արևելյան ուղղությամբ, սակայն ապա փոխում է իր ուղղությունը դեպի հյուսիս-արևելք, հատում հանրապետության սահմանը և խառնվում Կուր գետին: Աղստևի ամենախոշոր վտակը՝ Գետիկը, հոսում է հարավ-արևելյան ուղղությամբ:

ՀՀ տարածքում Աղստևի վրա կառուցված է Բերքաբերի ջրամբարը, իսկ գետի ստորին հոսանքում՝ Աղստևի ջրամբարը:

Գետերը պատկանում են Կուր գետի ավազանին: Հարուստ գետային ցանցը տարածաշրջանի նշանավոր առանձնահատկությունն է: Գետերն ու գետակները տիպիկ լեռնային են, սնվում են ձնհալից և անձրևաջրերից, ինչպես նաև բազմաթիվ ստորերկրյա աղբյուրներից: Գետերի հիմնական ուղղությունը հարավ-արևմուտքից հյուսիս-արևելք է: Գետերի մեծ մասը սակավաջուր են, հեղեղները հիմնականում տեղի են ունենում գարնանը՝ առաջացնելով սելավներ: Այս գետերը բնութագրվում են բարձր անկմամբ և թեքություններով, արագ հոսքով, քարի և ավազի բարձր պարունակությամբ, ինչպես նաև լեռնային գետերին բնորոշ ջրվեժներով և սահանքներով: Աղստևը պարկի տարածքով անցնող հիմնական գետն է, որը սկիզբ է առնում Փամբակի հյուսիսային լանջերից /Թեժ լեռ, 3101մ/: Գետի երկարությունը 121 կմ է, ավազանի մակերեսը՝ 2500 քառակուսի կիլոմետր, իսկ տարեկան հոսքը՝ 256 մլն խորանարդ մետր: Այն սնվում է ձնհալներից ու անձրևներից և առավելագույն հոսքը նկատվում է մայիսից մինչև հունիս: Գետի վերին հոսանքն անցնում է Մարգահովիտի գոգավորությունով, որը նեղ կիրճ է, ապա ընդլայնվում է՝ հոսելով անտառածածկ խորը կիրճով, անցնելով Դիլիջան և Իջևան քաղաքների միջով: Այնուհետև գետը անցնում է հարթավայրով, հատում Հայաստանի սահմանը և թափվում Քուր գետը: Աղստևի հիմնական վտակը Գետիկն է, իսկ Հովվաջուր, Շտողանաջուր, Հաղարծին և Բլղան գետակները փոքր վտակներ են: Գետիկ գետը (58 կմ երկարությամբ և 586 քառակուսի կիլոմետր ավազանով) սկիզբ է առնում Սևանի լեռնաշղթայի հյուսիսային լանջերից՝ 2620մ բարձրությունից, հոսելով Արեգունու և Միավորի միջլեռնային հովտով: Այն աջ կողմից թափվում է Աղստև գետը՝ Հաղարծին գյուղից 5 կմ ներքև, Աղստևի գետաբերանից 63 կմ հեռավորության վրա: ԴԱՊ-ը հայտնի է իր հանքային աղբյուրներով: Հատկանշական են Թթուջուրը (Գետիկ գետի հովտում), Մարգահովիտը (հարուստ է երկաթով), Ֆիոլետովոն (հարուստ է ածխածնով և կալցիումով) և Բլղանի աղբյուրները (որոնք հայտնի են «Դիլիջան» բրենդավորմամբ): Հիդրոկարբոնատներով հարուստ այս ջրերը օգտագործվում են աղեստամոքսային հիվանդությունների բուժման համար:

Պարկը հայտնի է նաև իր լճակներով, որոնցից ամենամեծն ու ամենահայտնին Արեգունի լեռնաշղթայի հյուսիսային լանջերին՝ 1400մ բարձրության վրա գտնվող Պարզ լիճն է, որն ընկած է Դիլիջան քաղաքից

8 կմ հյուսիս-արևելք: Պարզ լիճը զբաղեցնում է 2 հա մակերես, երկարությունը 250մ է, լայնությունը՝ 70մ, միջին խորությունը՝ 6մ, ջրի ծավալը՝ 83,8 հազ. մ3, իսկ ջրհավաք ավազանը՝ 1,52 կմ2: Հաջորդը՝ Գոշալիճն է (Տզրկա), որը գտնվում է Պարզ լճից արևելք՝ ծովի մակերևույթից 1500մ բարձրության վրա:

Այն ունի 56մ երկարություն և 270մ լայնություն, մակերեսը 1,53 հա է, ջրբաժան հատվածի մակերեսը՝ 1,34 կմ2 է, իսկ միջին խորությունը՝ 6մ: Պարկում կան նաև մի քանի փոքրիկ լճակներ:

Գետն իր հոսքի ողջ երկայնքով խիստ աղտոտված է արդյունաբերական և կենցաղային կեղտաջրերով: Կեղտաջրերն առանց մաքրվելու գետն են լցվում կոյուղու համակարգերից և չվերահսկվող աղբյուրներից: Օրական 18.000 մ³ հզորությամբ կեղտաջրերի մաքրման կայանը ներկայումս չի գործում:

4.4 Գլխայական պայմաններ

Դիլիջանն առանձնանում է մեղմ լեռնաանտառային կլիմայով, որին բնորոշ է չոր և տաք եղանակ ամբողջ տարվա ընթացքում: Օդի միջին սեզոնային ջերմաստիճանի տատանումներն ավելի ցածր են, քան Երևանում՝ կազմելով -2.0°C հունվարին մինչև 18.2°C հուլիսին (Երևանում՝ համապատասխանաբար -4.1°C և 26.2°C), սակայն միջին տարեկան ջերմաստիճանն ավելի ցածր է, քան Երևանում (համապատասխանաբար՝ 8.1°C և 12°C): Դիլիջանին բնորոշ է խոնավ լեռնային կլիմա:

Տեղումների տարեկան առավելագույն քանակը տատանվում է 35%-ից զարնանը մինչև 12% ձմեռային ամիսներին: Մայիսին տեղումների քանակը հասնում է շուրջ 100 մմ-ի, իսկ հունվարին՝ 12 մմ-ի:

Տեղումների միջին տարեկան քանակը կազմում է 593 մմ՝ երեք անգամ ավելին, քան Երևանում (200 մմ):

Արևափայլի միջին տարեկան տևողությունը Դիլիջանում կազմում է 2091 ժամ (Երևանում՝ 2480 ժամ), իսկ օդի տարեկան միջին հարաբերական խոնավությունը կազմում է 73%: Չյունախախկույթի միջին բարձրությունը 18 սմ է (Երևանում՝ 2,5 սմ), իսկ առավելագույնը՝ 39 սմ (հյուսիսային լանջերին):

Գերակայում են արևելյան (17%) և հյուսիս-արևելյան (46%) քամիները՝ 2 մ/վրկ միջին տարեկան արագությամբ (նույնն ինչ Երևանում): Ամպրոպներով օրերի քանակը տարվա ընթացքում կազմում է 15-20 (Երևանում՝ 50 - 60):

4.5.1 Օդերևութաբանական-կլիմայական պայմանները

Այս բաժնի մշակման նպատակն է օդերևութաբանակլիմայական պայմանների գնահատումը, որոնք որոշիչ են բնակչության ապրելակերպի և մթնոլորտի մերձգետնյա շերտում, վնասակար նյութերի ցրման բնութագրի վրա ազդեցությունների տեսանկյունից:

Շրջանի կլիման բարեխառն է: Բնութագրվում է մեղմ ամառներով (բացարձակ մաքսիմումը հասնում է $+34^{\circ}\text{C}$), համեմատաբար ցուրտ ձմեռներով (բացարձակ մինիմումը ոչ ցածր քան -23°C): Օդի միջին տարեկան ջերմաստիճանը կազմում է 5.3°C , ամենաշոգ օգոստոս ամսվա միջին ջերմաստիճանը՝ $+20.6^{\circ}\text{C}$, ամենացուրտ ամսվանը հունվար՝ -8.5°C : Առավելագույնը դիտվում է մայիս ամսին՝ 109 մմ, նվազագույնը հունվարին՝ 27 մմ: Չյան տեսքով թափվող տեղումների քանակությունը 67 մմ է: Նոյեմբերի 5-ից դիտվում է կայուն ձնածածկ, որը վերանում է ապրիլի 18-ին: Չյան ծածկույթի առավելագույն շերտի բարձրությունը 74 սմ է, նվազագույնը 3 սմ:

Օդի միջին տարեկան հարաբերական խոնավությունը կազմում է 73 %: Քամու միջին տարեկան արագությունը կազմում է 3.1 մ/վրկ:

4.5.1.1 Ընդհանուր ֆոնային կլիմայական բնութագիրը

Ֆոնային կլիմայական բնութագիրը իր մեջ ընդգրկում է երկու հիմնական ասպեկտ՝ գ կլիմայի գնահատականը մարդու ֆիզիոլոգիական հարմարավետության վրա ազդեցության տեսանկյունից գ կլիմայի գնահատականը վնասակար նյութերի ցրման պայմանների վրա ազդեցության տեսանկյունից:

Կլիմայի գնահատականը մարդու ֆիզիոլոգիական հարմարավետության վրա ազդեցության տեսանկյունից տրված Է աղյուսակ 1.1-ում:

Աղյուսակ 1.1 Կլիմայի գործոնների կենսակլիմայական գնահատականի չափանիշները

Կլիմայի գործոնները	Չարմարավետությունը	Անհարմարավետություն	
		գերտաքացում	սառեցում
1. Օդի ջերմաստիճանը, °C	12-14	24-ից բարձր	30-35, 1.5 մ/վրկ, 25, 2.0 մ/վրկ, -15, 3.5 մ/վրկ քամու դեպքում.
2. Քամու արագությունը, վ/վրկ	0.5-3.0	փոքր 0.5 մեծ 3.0	5-ից մեծ բացասական ջերմաստիճանի դեպքում
3. Չարաբերական խոնավությունը, %	30-70	30-ից փոքր 70-ից բարձր	80-ից բարձր

Դիլիջան քաղաքի օդերևութաբանական պարամետրերը վերցված են «Շինարարական կլիմայաբանություն» СНиП II-7.01-2011 տվյալների համաձայն:

Աղյուսակ 1.2. Օդի ջերմաստիճան

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Բարձրություն ծովի մակարդակից, մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, °C												Միջին տարեկան, °C	Բացարձակ նվազագույն, °C	Բացարձակ առավելագույն, °C
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
Դիլիջան	1256	-1.5	-1,0	2.2	7.7	12,0	15.2	18.3	18.1	14.3	9.3	4.3	0.4	8.3	-23	38

Աղյուսակ 1.3. Օդի հարաբերական խոնավությունը

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %															
	ըստ ամիսների												Միջին տարեկան, %	Միջին ամսական ժամը 15-ին		
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր		ամենացուրտ ամսվա %	ամենաշոգ ամսվա, %	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	
Դիլիջան	63	65	70	72	78	79	77	78	79	78	73	70	74	51	60	

Աղյուսակ 1.4. Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Տեղումների քանակը $\frac{\text{միջին ամսական}}{\text{օրական առավելագույն}}$, մմ												Ձնածածկույթ			
	ըստ ամիսների												Սարեկան	Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, սմ	Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը	Ձյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր				
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
Դիլիջան	22	30	45	65	106	103	66	51	46	47	36	22	639	53	57	103
	35	33	42	43	58	62	55	47	45	45	49	33	62			

Աղյուսակ 1.5. Քամի

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Միջին տարեկան մթնոլորտային ճնշում, (հՊա)	Ամիսներ	Կրկնելիությունը, %								Անհողմությունների կրկնելիությունը, %	Միջին ամսական տարեկան արագությունը, մ/վ	Միջին տարեկան արագությունը, մ/վ	Ուժեղ քամիներով (≥15մ/վ) օրերի քանակը	Հաշվարկային արագությունը, մ/վ, որը հնարավոր է մեկ անգամ «ո» տարիների ընթացքում		
			ըստ ուղղությունների												20	50	100
			Հյուսիս-սային (Հս)	Հյուսիս-Արեւելյան (ՀսԱրլ)	Արեւելյան (Արլ)	Հարավ-Արեւելյան (ՀվԱրլ)	Հարավ (Հվ)	Հարավ-Արեւմտյան (ՀվԱրմ)	Արեւմտյան (Արմ)	Հյուսիս-Արեւմտյան (ՀսԱրմ)					16	17	18
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
Դիլիջան	875,6	հունվար	3	19	2	3	22	32	15	4	28	2,1	1,8	4	20	22	24
			1,6	1,7	1,8	2,4	2,8	2,5	2,0	1,5							
		ապրիլ	4	41	6	4	13	20	9	3	31	2,0					
			1,6	2,2	2,0	2,4	2,5	2,3	1,6	1,5							
		հուլիս	5	63	10	2	2	7	8	3	42	1,7					
			1,9	2,5	2,4	1,4	1,4	1,3	1,1	1,4							
		հոկտեմբեր	5	46	6	3	10	17	10	3	43	1,5					
			1,7	2,2	1,9	1,7	1,9	1,7	1,4	1,4							

Աղյուսակ 1.6. Արևափայլի տևողությունը

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Տևողությունը ըստ ամիսների, ժամ											Տարեկան գումարային	
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր		Դեկտեմբեր
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
Դիլիջան	125	131	155	156	199	222	232	221	181	163	115	112	2012

Աղյուսակ 1.7. Անարև օրերի քանակը

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	ըստ ամիսների											Տարեկան	
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր		Դեկտեմբեր
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
Դիլիջան	4	6	5	4	2	1	2	2	3	3	6	5	43

Աղյուսակ 1.8. Տարվա ցուրտ ժամանակաշրջանի կլիմայական հարաչափերը

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Օդի ջերմաստիճանը, °C						Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը %			Մթնոլորտային տեղումները և գրունտի սառչման խորությունը		Քամի				
	ամենացուրտ օրվա	ամենացուրտ հնգօրյակի	ամենացուրտ ժամանակաշրջանի միջինը	բացարձակ նվազագույնը	ամենացուրտ ամսվա միջին օրական տատանումը	Տևողությունը, օր	միջին ամսական	միջին ամսական ժամը 15-ին	Տեղումների քանակը նոյմբեր-մարտ ամիսներին, մմ	Գրունտի սառչման առավելագույն խորությունը, սմ	Գերակշռող ուղղությունը դեկտեմբեր-փետրվար ամիսներին	Միջին արագություններից առավելագույնը ըստ ուղղությունների հունվարին մ/վ				
													ապահովվածությամբ, %	Միջին ջերմաստիճանը ժամանակաշրջանի միջին օրական ջերմաստիճանով՝ ոչ բարձր, °C		
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
Դիլիջան	-17	-15	-14	-12	-1,8	-23	10,4	73	178	201	63	51	155	47	Հվ	2,8
								-1,2	1,7	2,6						

Աղյուսակ 1.9. Տարվա տաք ժամանակաշրջանի կլիմայական հարաչափերը

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Օդի ջերմաստիճանը, °C					Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Մթնոլորտային տեղումները, մմ		Քամի, մ/վ	
	Ապահովվածությամբ, %		բացարձակ առավելագույնը	ամենատաք ամսվա միջին առավելագույնը	ամենատաք ամսվա միջին օրական տատանումը	միջին ամսական	միջին ամսական ժամը 15-ին	Տեղումների քանակ ապրիլ-հոկտեմբեր ամիսներին	Տեղումների օրական առավելագույն քանակը	Գերակշռող ուղղությունը հունիս - օգոստոս ամիսներին	Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների հուլիսին
	0,95	0,99									
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
Դիլիջան	24	25	38	24,4	11,7	77	60	484	62	ՀսԱրլ	2,5

2.1 Անտառ

Ազգային պարկի բուսականության գերիշխող տիպը անտառայինն է: Այստեղ գերակշռում են սաղարթավոր տերևաթափ տեսակները՝ արևելյան հաճարենին (*Fagus orientalis*), վրացական կաղնին (*Quercus iberica*), խոշորառեջ կաղնին (*Q. macranthera*), կովկասյան բոխին (*Carpinus caucasica*), դաժին կամ արևելյան բոխին (*C. orientalis*): Սրանց ուղեկցում են դաշտային (*Acer campestre*), սրատերև (*A. platanoides*) և բարձրլեռնային (*A. trautvetteri*) թխկիները, լորենին (*Tilia caucasica*), հացենին (*Fraxinus excelsior*), արոսենին (*Sorbus aucuparia*, *S. graeca*) և այլն: Հանդիպում են նաև վայրի պտղատուներ՝ կովկասյան տանձենին (*Pyrus caucasica*), արևելյան խնձորենին (*Malus orientalis*), սալորենին (*Prunus divaricata*), մամխենին (*P. spinosa*), ընկուզենին (*Juglans regia*), սովորական տիլենին (*Corylus avellana*), հոնին (*Cornus mas*), սգնու տարբեր տեսակներ (*Crataegus*), զկեռենի (*Mespilus germanica*), թխենի (*Padus*) և այլն: Հարուստ է նաև հատապտղատուների բազմազանությունը՝ հաղարջենի (*Ribes*), մոշենի (*Rubus caesius*), մորի (*R. idaeus*), կոկոռշենի (*Grossularia*) և այլն: Անտառի վերին սահմանը եզրափակում են կեչու կորաբուն մերձալպյան նոսրանտառային մնացորդները՝ ելունդավոր և թավոտ կեչիների (*Betula pendula*, *B. pubescens*), կաղամախու (*Populus tremula*), այծուռենու (*Salix caprea*) գերակշռությամբ: Հիմնական անտառկազմող ծառատեսակների գերակշռությամբ ծառուտները ներկայացվում են կամ միատարր կաղնուտների, հաճարկուտների և բոխուտների ձևով, կամ էլ խառը՝ դրանց տարբեր խմբավորումների տարբերակներով: Անտառային էկոհամակարգերը ըստ ուղղաձիգ բարձունքային գոտիականության և դիրքադրության ունեն հետևյալ տարածվածությունը: Միջին անտառային գոտու հարավահայաց լեռնալանջերին տարածվում են վրացական կաղնու, իսկ հանդիպակաց հյուսիսայաց լանջերին՝ արևելյան հաճարենու անտառային զանգվածները: Դրանից վեր, սկսած 1500 մ բարձրությունից, անտառային գոտին ներկայացնում է խոշորառեջ կաղնին: Բոխին հանդիպում է գրեթե բոլոր տիպի ծառուտներում: Ընդ որում՝ արևելյան բոխին (դաժին), որպես կանոն, հանդիպում է ստորին անտառային գոտու (մինչև 1500 մ) ենթանտառում, իսկ կովկասյան բոխին՝ մինչև 2000 մ: «Դիլիջան» ազգային պարկի անտառային էկոհամակարգերին բնորոշ է ասեղնատերև ծառատեսակների առկայությունը: Սոճին (*Pinus sosnowskyi*) որոշ տեղերում առաջացնում է խիտ ծառուտներ, հանդիպում է Արեգունի և Փամբակի լեռանշղթաների լանջերին, մասնավորապես՝ Դիլիջանի լեռնանցքի ոլորանի շրջանում: Հանդիպում է նաև Դիլիջան քաղաքային բնակավայրի և մերձակա լանջերին: Մեծ հետաքրքրություն են ներկայացնում գիհու նոսրանտառները, որոնք տարածված են Գետիկի հովտում, ինչպես նաև Իջևանի լեռնաշղթայի հյուսիսային հովտահայաց չոր լանջերին: Լավ պահպանված գիհուտներ կան հատկապես Արեղաքար սարի, Աղստև գետին հովտահայաց, Ժայռոտ լանջերին: Գիհու նոսրանտառները ներկայացնում են բազմապտուղ (*Juniperus polycarpus*) և սրաթեփուկ կամ զարշահոտ (*J. foetidissima*) գիհիները: Պարկի տարածքում աճում են նաև գիհու թփային տեսակները՝ երկարատերև (*J. oblonga*) և ցածրաճ (*J. depressa*):

Բուսականության այլ տիպերը ներկայացված են փոքր կղզյակներով՝ անտառային բացատներում կամ անտառի վերին սահմանից վեր:

Պարկի ստորին հատվածում (մինչև 1100 մ բարձրության վրա) փոքր տարածքներով հանդիպում են շիբլյակ կոչված թփուտները, ուր գերիշխում են ցաքի փշուտ (*Paliurus spinachristi*) և չորասեր թփերի մի քանի այլ տեսակներ՝ ծորենի սովորական (*Berberis vulgaris*), չմենի ամբողջաեզր (*Cotoneaster integerrimus*), մասրենի շան (*Rosa canina*), փռչնի կովկասյան (*Celtis caucasica*), դժնիկ Պալլասի (*Rhamnus pallasii*) և այլն: Այս համակեցություններում խոտային ծածկույթը շատ բազմազան է և ներկայացված է հիմնականորեն չորասեր խոտաբույսերով: Այստեղ հանդիպում են նաև տափաստանային բուսականության փոքր կղզյակներ բոտրիոխլոայի (*Bothriochloa ischaemum*) գերակայմամբ, որոնք հիմնականում երկրորդային ծագում ունեն: Անտառագուրկ ոչ մեծ տարածքներում հանդիպում են այս շրջանի համար ոչ բնորոշ շյուղախոտ վալեսյանի (*Festuca valesiaca*) գերակշռությամբ տափաստանային խմբավորումները, որոնց կազմում բավականին շատ են մարգագետնային բուսատեսակները: (1800)- (1900) մ-ից բարձր տարածված են մերձալպյան մարգագետինները, ուր գերիշխում են խառը տարախոտ- հացազգային համակեցությունները: Հիմնական գերակշռող տեսակներն են բարակոտնուկ սանրանմանը (*Koeleria cristata*), դաշտավլուկ մարգագետայինը (*Poa pratensis*), դաշտավլուկ կաղնուտայինը (*Poa nemoralis*), ոգնախոտ կծկավոր (*Dactylis glomerata*), խմբախոտ բուրավետը (*Anthoxanthum odoratum*), ոսկեվարսակ սիբիրյանը (*Trisetum sibiricum*) և այլն: Այստեղ տարածված են համակեցություններ, ուր գերակայում են վարդակակաչ փնջաձևը (*Anemone fasciculata*), ձկին գորտնուկանմանը (*Trollius ranunculinus*) և կեղծ դանձլամեր սպիտակը (*Veratrum album*), ընդ որում՝ վերջինի տարածումը ուղղակիորեն կապված է արածեցման ինտենսիվության հետ: Մերձալպյան գոտու որոշ հատվածներում տարածված են մերձալպյան բարձրախոտերի համակեցությունները, որտեղ ներկայացված են շուշան հայկականը (*Lilium armenum*), ընձախոտ արևելյանը (*Aconitum orientale*), զիվան հսկայական (*Cephalaria gigantea*), ոգնախոտ կծկավորը (*Dactylis glomerata*), զանգակ խմբվածը (*Campanula glomerata*), թթվիճ խոշորածաղիկը (*Betonica macrantha*) և այլն: «Դիլիջան» ազգային պարկի տարածքի ձորերի ժայռոտ հատվածներում ներկայացված է ինտրազոնալ ժայռային բուսականությունը, որի կազմում հատուկ հետաքրքրություն են ներկայացնում պտերների մի քանի տեսակներ՝ բանպոտ Բռաունի (*Polystichum braunii*), բասբայջ սովորական (*Polypodium vulgare*), ասպլենի (*Asplenium*) որոշ տեսակներ: Ազգային պարկի տարածքում գտնվող լճերի և գետերի ափերին ներկայացված է ջրաճահճային բուսականությունը, որի կազմում են հիմնականում Հայաստանի համար սովորական տեսակներ՝ ուռենի (*Salix*), բարդի (*Populus*), բոշի (*Carex*), գորտնուկ (*Ranunculus*), կնյուն (*Juncus*) ցեղերի ներկայացուցիչներ:

2.2 Կենսաբազմազանություն

2.2.1 Բուսական աշխարհ

«Դիլիջան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում ֆլորան ընդգրկում է անոթավոր բույսերի 1200 տեսակ, որից 977 տեսակը աճում է պարկի տարածքում: Դրանցից 51-ը ծառատեսակներ են, 47-ը՝ թփեր, 696-ը՝ բազմամյա խոտաբույսեր, 176-ը միամյա և երկամյա բույսեր, 7-ը մակաբույծներ: Նշված տեսակներից 7-ը հանդիսանում են Հայաստանի էնդեմիկներ: Պարկի պահպանական գոտում հանդիպում են անոթավոր

բույսերի 958 տեսակներ (դրանցից 225-ը չեն հանդիպում ազգային պարկի տարածքում): Պահպանական գոտում (Աղստն գետի ձորի լանջերի բաց տեղանքներում) աճում է ևս մեկ էնդեմիկ տեսակ՝ Պսեֆելլուս Փամբակի (*Psephellus pambakensis*), որը բավականին լայն տարածում ունի Լոռիում և Իջևանում: Ազգային պարկի ֆլորայի 17 տեսակներ ընդգրկված են Հայաստանի Կարմիր գրքում: Ազգային պարկի ֆլորայի 54 տեսակներ հանդես են գալիս որպես դեղաբույսեր: Դրանց մի մասը չեն կազմում խիտ պոպուլյացիաներ, այլ ցրված հանդիպում են ազգային պարկի տարածքում և այդ պատճառով ներկայումս տնտեսական հետաքրքրություն չեն ներկայացնում, իսկ 41 տեսակներ ուտելի են:

Բացի այդ, «Դիլիջան» ազգային պարկի տարածքից և դրա պահպանական գոտուց հայտնաբերվել են 480 տեսակի և ենթատեսակի սնկեր, որոնցից 320-ը պատկանում են ազարիկալ սնկերին, 124-ը՝ աֆիլոֆորայիններին և 36-ը՝ գաստերոմիցետներին: Առավել տարածված են դառնամատիտեղ (*Russula*), կաթնասունկ (*Lactarius*), սարդոստայնասունկ (*Cortinarius*), թելիկասունկ (*Inocybe*), ճանճասպան (*Amanita*) ցեղերի միկորիզագոյացնող տեսակները, ինչպես նաև բնափայտ քայքայող ականջասունկ սովորական (*Pleurotus ostreatus*), կոճղասունկ իսկական (*Armillaria mellea*) տեսակները և Աբեթասնկեր (*Polyporaceae*) ընտանիքի ներկայացուցիչները: Նշված սնկերից 176-ը ուտելի են, որոնցից առավել տարածված է և վաճառվում է շուկաներում միայն ականջասունկ սովորական կամ կախասունկ (*Pleurotus ostreatus*) տեսակը: 38 տեսակի սնկեր թունավոր են և տեղացի բնակիչները դրանց կոչում են գարշասնկեր (պոզանկա), խուսափում են հավաքելուց, և վերջին տարիներին թունավորման դեպքեր չեն գրանցվել:

Ըստ ՀՀ Ատլասի (2007 թ.) Դիլիջան քաղաքային բնակավայրի տարածքը գտվում է բուսական Կովկասյան պրովինցիայում՝ Իջևանի շրջանում: Դիլիջան քաղաքային բնակավայրում և մոտակայքում բույսերի էնդեմիկ տեսակներ չեն հայտնաբերվել: Այստեղ տարածված են կաթնափուշ բժավոր (*Sylibum Marianum*) բուսատեսակներ: Դիլիջանում տարածված են դեղաբույսեր՝ ալոնների մուգ արնագույն և այլ տեսակներ (*Crataegus Atrosanguinea*), գետնամորի անտառային (*Fragaria Vesca*):

2.2.2 Կենդանական աշխարհ

Անողնաշարավորներ

«Դիլիջան» ազգային պարկի տարածքում հանդիպում են փափկամարմինների (*Mollusca*) 69 և հողվածոտանիների (*Arthropoda*) 143 տեսակներ: Վերջիններս պատկանում են միջատների (*Insecta*) դասին: Նշված տեսակներից 7-ը Հայաստանի էնդեմիկներ են: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցանկում ընդգրկված են 3 տեսակներ, որոնք հանդիպում են «Դիլիջան» ազգային պարկի տարածքում: Դրանք են՝ *Parnassius apollo* L., *Cerambyx cerdo acuminatus* Motsch., *Rosalia alpina* L. և *Proserpinus proserpina* Pall-ը:

Սողուններ

«Դիլիջան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում բացահայտվել են սողունների 19 տեսակներ, որոնք բաժանվում են հետևյալ կարգաբանական խմբերի.

- Մողեսներ (Lacertilia) – 12 տեսակ.
- Օձեր (Serpentes) – 6 տեսակ.
- Կրիաներ (Testudines) - 1:

Նշված սողուններից ոչ մեկը Հայաստանի Կարմիր գրքում գրանցված չէ:

Կաթնասուններ

«Դիլիջան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում հանդիպում են կաթնասունների 49 տեսակներ: Դրանք բաժանված են հետևյալ 6 կարգաբանական դասերի.

- Միջատակերներ (Insectivora) – 9 տեսակ.
- Կրծողներ (Rodenti) – 17 տեսակ.
- Նապաստակակերպեր (Logomorpha) – 1 տեսակ.
- Ձեռքաթևավորներ (Chiroptera) – 7 տեսակ.
- Գիշատիչներ (Carnivora) – 12 տեսակ.
- Կճղակավորներ (Artiodactyla) – 3 տեսակ:

Նշված կաթնասուններից Հայաստանի Կարմիր գրքում գրանցված են 6-ը՝ Եվրոպական լայնական ջրաշարեր, հնդկական վայրենակերպը կամ մացառախոզը, խայտաքիսը, ջրսամույրը, գորշ արջը և անտառային կատուն:

2.2.3 Բուսական աշխարհի պահպանության միջոցառումներ

Անհետացման վտանգի տակ գտնվող, հազվագյուտ, պահպանության կարիք ունեցող բուսատեսակներին վնաս չի հասցվի, քանի որ նախագծով նախատեսված միջոցառումները իրագործվում են արդեն իսկ գոյություն ունեցող կառույցների սահմաններում և նոր տարածքներ գրեթե չեն ներառում:

Ծառաթփային բուսականության վրա բացասական ազդեցության ի սկզբանե կանխարգելման և պահպանության նկատառումներից ելնելով՝ նախագծման ընթացքում ջրատարների ուղեգծերը ընտրվել են այնպես, որ նրանք չհատվեն ծառերի հետ: Որպես բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման միջոցառումներ նախատեսվում է իրականացնել հողերում առկա օբյեկտների պահպանությանն ուղղված հետևյալ միջոցառումները՝

1) վայրի բուսատեսակների և դրանց պոպուլյացիաների վիճակի ուսումնասիրության (տեսակային կազմ, տարածվածություն, քանակ) իրականացում, որի տվյալները սահմանված կարգով տրամադրվում են բուսական աշխարհի պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում լիազորված պետական մարմնին.

2) բուսատեսակների այլ աճելավայրեր ապօրինի տեղափոխման և այդ տարածքում այլ տեսակների կլիմայավարժեցման կանխարգելում.

3) կենսաբանական տեխնոլոգիաների միջոցով ստացված կենդանի ձևափոխված օրգանիզմների ապօրինի օգտագործման և օտարածին տեսակների ներմուծման կանխարգելում.

4) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ արգելված թունաքիմիկատների օգտագործման կանխարգելում:

4. Հոդերում Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր գրքում (այսուհետ՝ կարմիր գիրք) գրանցված տվյալ բուսական տեսակի նոր պոպուլյացիաների հայտնաբերման դեպքում դրանց պահպանության նպատակով սույն կարգի 3-րդ կետով նախատեսված միջոցառումների հետ միասին տնտեսական գործունեություն իրականացնողները՝

1) առանձնացնում են օգտագործման նպատակով տրամադրված տարածքում պահպանվող գոտիներ, որոնք ունեն տեղական նշանակություն և անհրաժեշտ են կարմիր գրքում գրանցված բուսատեսակների՝ սույն կետում նշված նոր պոպուլյացիաների կենսունակության ապահովման նպատակով.

2) ժամանակավորապես սահմանափակում են առանձնացված պահպանվող գոտիներում տնտեսական գործունեության որոշ տեսակներ, եթե դրանք կարող են բերել նշված բուսատեսակների աճելավայրերի վիճակի վատթարացմանն ու պոպուլյացիաների կենսունակության խաթարմանը.

3) սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված միջոցառումների իրականացման անհնարինության դեպքում կարմիր գրքում, որպես տվյալ բույսի աճելավայր չգրանցված տարածքներից, բույսերի բնական վերարտադրության նպատակով տեղափոխում են տնտեսական գործունեության արդյունքում ոչնչացման սպառնալիքի տակ գտնվող բույսերի առանձնյակները տվյալ տեսակի համար նպաստավոր բնակլիմայական պայմաններ ունեցող որևէ բնության հատուկ պահպանվող տարածք կամ բուսաբանական այգիների տարածք, կամ կարմիր գրքում որպես տվյալ բույսի աճելավայրեր գրանցված որևէ տարածք, իսկ բույսերի սերմերը տրամադրում են համապատասխան մասնագիտացված կազմակերպությանը՝ գենետիկական բանկում պահելու և հետագայում տեսակի վերարտադրությունը կազմակերպելու նպատակով:

5. Հոդերում հայտնաբերված՝ կարմիր գրքում գրանցված տվյալ բուսական տեսակի նոր պոպուլյացիաների առանձնյակների տեղափոխումն իրականացվում է տնտեսական գործունեություն իրականացնողների միջոցների հաշվին՝ տնտեսական գործունեություն իրականացնողի կողմից ներկայացված տվյալ բուսատեսակի առանձնյակների տեղափոխման միջոցառումների իրականացման վերաբերյալ բուսական աշխարհի պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում լիազորված պետական մարմնի հետ կնքված համապատասխան պայմանագրի համաձայն:

2.2.4 Կենդանական աշխարհի պահպանության միջոցառումներ

Ամենամեծ ազդեցությունը կարտահայտվի հողային աշխատանքների ժամանակ դրանց բների ոչնչացմամբ: Սակայն կենդանիները այդ դեպքում առանց մեծ կորուստների կից տարածքներում կգտնեն նոր բների և բնակավայրերի լայն հնարավորություններ:

Կենդանական աշխարհի վրա հնարավոր ազդեցությունը նվազագույնի հասցնելու նպատակով ջրատարերի կառուցման ընթացքում պայթեցման և ամենաինտենսիվ շինարարական աշխատանքները կիրականացվեն ձվադրման և բնադրման ժամանակաշրջանից (ապրիլ-մայիս) դուրս: Բացի այդ, պայթեցումների ազդեցությունը նվազագույնի հասցնելու նպատակով, դրանք կիրականացվեն փոքր հզորության լիցքերով:

Ազգային պարկի զարգացման և բնության պահպանության հարցերում էական աջակցություն են ցուցաբերում երեք հասարակական կազմակերպություններ՝ Կովկասի բնության հիմնադրամը (CNF), Վայրի բնության համաշխարհային հիմնադրամը (WWF) և «Հայաստան ծառատունկ ծրագիրը» (ATP):

1. CNF-կողմից իրականացվել է Դիլիջանի ազգային պարկի կառավարման պլանի մշակումը: Բացի այդ, WWF-ի հետ համատեղ կատարվում են Դիլիջանի տարածաշրջանի անտառներում ազնվացեղ եղջերուի խիստ սակավաթիվ պոպուլյացիայի վերականգնմանն ուղղված աշխատանքներ:

2. «Հայաստան ծառատունկ ծրագիրը» («Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամը) հսկայական ջանքեր է գործադրել կենսաբազմազանության առումով հարուստ, սակայն բնապահպանական տեսանկյունից խիստ վտանգված Կովկասյան տարածաշրջանում ընթացող անապատացման դեմ:

Տնկվել և վերականգնվել է ավելի քան (4 000 000) ծառ, սեզոնային ծառատունկերի և համանման այլ նախաձեռնությունների շրջանակներում տեղի բնակչության համար ստեղծվել են հարյուրավոր աշխատատեղեր: ՀԾԾ գործունեությունը ծավալվում է երեք հիմնական ուղղություններով՝ ծառերի տնկում քաղաքային և գյուղական տարածքներում, բնապահպանական կրթություն, կայուն զարգացում և աղքատության նվազեցում: ՀԾԾ-ն հենակետ և խոշոր տնկարան է հիմնել Դիլիջանից (15) կմ հեռավորության վրա՝ Ֆիոլետովո գյուղի հարևանությամբ: Կազմակերպությունն իր օգնությունն ու ծառայություններն է առաջարկել Դիլիջանի զարգացման նախաձեռնություններին, ինչպես նաև Դիլիջանի բնության կենտրոնին ազգային պարկի պահպանության հարցում:

3. Վայրի բնության համաշխարհային հիմնադրամի (WWF) գործունեությունը Հայաստանում ընդգրկում է գոյություն ունեցող հատուկ պահպանվող տարածքների զարգացումն ու դրանց կառավարման համակարգերի կատարելագործումը, նոր պահպանվող տարածքների ստեղծմանն ուղղված քայլերի ձեռնարկումը, վտանգված տեսակների պահպանումը, էկոհամակարգերի վերականգնումը, կլիմայական փոփոխություններին անտառների հարմարեցումը և բնապահպանական կրթության և իրազեկման բարձրացման ծրագրերին սատարումը: Ներկայումս «WWF-Հայաստանը» ՀՀ բնապահպանության նախարարության հետ միասին և «WWF-Գերմանիայի», CNF-ի և

«Օրանժ Արմենիայի» աջակցությամբ իրականացնում է Դիլիջանի ազգային պարկում «ազնվացեղ եղջերուների պոպուլյացիայի վերականգնում» (ազնվացեղ եղջերուների բազմացման կենտրոնի ստեղծում) ծրագիրը:

2.3 Օդային ավազան

2.3.1 Ֆոնային աղտոտվածություն

Դիլիջան քաղաքային բնակավայրի տարածքում մթնոլորտն աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաները (մգ/մ³), վերցված են ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կայքէջից (ըստ բնակչության քանակի) և բերված են աղյուսակում:

Աղյուսակ. Աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաների արժեքները $U_x=7m/վրկ$

№№ ը/հ	Աղտոտող նյութերի կոդերը և անվանումները	ՄԹԽ, մգ/մ ³	Ֆոնային կոնցենտրացիաները	
			մգ/մ ³	միավոր ՄԹԽ
1	002 Փռշի	0.5	0.3	0.6
2	701 Ծծմբի երկօքսիդ	0.5	0.05	0.1
3	200 Ազոտի օքսիդներ	0.2	0.015	0.075
4	322 Ածխածնի օքսիդ	5.0	0.8	0.16

Ինչպես երևում է աղյուսակից, Դիլիջան համայնքի տարածքում վնասակար նյութերի կոնցենտրացիաները գտնվում են բնակելի գոտիների համար սահմանված նորմերում:

Մթնոլորտային օդի աղտոտվածության գնահատումը կատարվել է «Методические указания по санитарному надзору в районной планировке – М. Минздрав СССР, 1990» համապատասխան:

2.4 Սոցիալ-տնտեսական արդի վիճակը

Համայնքի տնտեսությունը կառուցված է երեք հիմնական բաղադրիչներից՝ փոքր համայնքային ձեռնարկություններ, մեծ և միջին ձեռնարկություններ և գյուղատնտեսություն՝ փոքր ու մեծ ֆերմերային տնտեսություններ: Համայնքի տնտեսությունը, բացի աշխատատեղեր և ընդհանուր բարեկեցություն ապահովելուց, ունի մեկ այլ հիմնական գործառույթ՝ ապահովել բավարար միջոցներ սոցիալական հատվածի համաչափ զարգացման (կրթություն, առողջապահություն և այլն), ենթակառուցվածքների անխափան վիճակի (ճանապարհներ, գազի, ջրի, էլեկտրաէներգիայի մատակարարում և այլն) համար, ինչպես նաև հնարավորություն տալ բարելավելու էկոլոգիական իրավիճակը: Եթե համայնքի տնտեսությունը կարողանում է կատարել զարգացման համար նախատեսված ծախսերը համայնքի ներսում առկա կրթական, առողջապահական հաստատությունների, էկոլոգիական վիճակի, ենթակառուցվածքների կառուցման ու պահպանության վրա, ապա համայնքը զարգանում է որպես մեկ ամբողջական օրգանիզմ: Տնտեսությունը ստեղծում է հավելյալ արժեք, այն ծախսվում է համայնքի զարգացման վրա, իսկ համայնքն էլ ձեռնարկություններին ապահովում է որակյալ աշխատուժով, ենթակառուցվածքներով և այլ ռեսուրսներով:

2.4.1 Տեղական տնտեսության կառուցվածքի վերլուծություն

Դիլիջան համայնքը հանդիսանում է Հայաստանի զբոսաշրջային կենտրոններից մեկը, որտեղ վերջին տարիների ընթացքում իրականացվող նախագծերի արդյունքում նաև զարգանում է կրթական և մշակութային ոլորտները: Ըստ ՀՀ պետական ռեզիստրի տվյալների համայնքում գրանցված է 795 ձեռնարկություն, որոնց թիվը աճել է 20-ով: Համայնքում գործունեություն են ծավալում 11 ֆինանսական կազմակերպություններ, որոնց թիվը կտրուկ աճել է Ֆինանսների նախարարության ուսումնական կենտրոնի և Կենտրոնական բանկի մասնաճյուղի կառուցումից հետո համայնքում կար 2 բանկի մասնաճյուղ:

Համայնքում գործող կազմակերպությունները ունեն հետևյալ բաշխվածությունը՝

- 795 միկրո ձեռնարկություն
- 78 փոքր ձեռնարկություն
- 1 միջին ձեռնարկություն
- 3 խոշոր ձեռնարկություն

Խոշոր կազմակերպությունները հիմնականում գործում են ֆինանսական և կրթական

ոլորտներում: Համայնքում 2013թ.-ից գործում է ՀՀ Կենտրոնական Բանկի ուսումնահետազոտական կենտրոնը, 2013թ. սեպտեմբերից՝ «Այբ» դպրոցների ընտանիքին պատկանող Դիլիջանի կենտրոնական դպրոցը, 2014թ.-ից՝ «Դիլիջանի հնտերնեյշնլ սքուլ օֆ Արմենիա» միջազգային դպրոցը: 2017թ.-ին համայնքում բացվեց Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարանը: Վերը նշված կազմակերպություններում և համայնքում գործող ֆինանսական կազմակերպություններում աշխատում է մոտ 4,000 մարդ, որոնց 60%-ը չի հանդիսացել Դիլիջանի բնակիչ:

Համայնքում թույլ է զարգացած գյուղատնտեսության ոլորտը: Այստեղ գործում է ընդամենը 17 կազմակերպություն, որոնցից միայն մեկն է միջին չափի՝ «Դիլի» ՍՊԸ-ն, որն անասնապահական համալիր լինելուց բացի, զբաղվում է նաև պանրի արտադրությամբ: Այստեղ զբաղված է 16 մարդ:

Գյուղատնտեսությունը 2-րդ ամենախոստումնալից ոլորտն է զբոսաշրջությունից հետո: Իրականացվող ծրագրերի արդյունքում աճող մշտական բնակչության և զբոսաշրջիկների թվի աճին զուգահեռ, մեծանում է նաև գյուղատնտեսական արտադրանքի նկատմամբ պահանջարկը, ինչը ներկայումս ապահովվում է այլ շրջանների արտադրանքով:

Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ առանձնանում է սննդամթերքի և ըմպելիքի արտադրությունը: Տարեկան համեմատաբար մեծ շրջանառությամբ աչքի են ընկնում «Դիլիջան» և «Դիլիջան Ֆրոլովա» հանքային ջրերի գործարանները, «Դիլիջան» գարեջրի գործարանը: Արդյունաբերության ոլորտում գործում է 88 կազմակերպություն:

Համայնքում գործում է մեկ բժշկական կենտրոն, որի կառավարումը հանձնվել է մասնավոր ընկերության: Բացի բժշկական կենտրոնից, համայնքում գործում են համայնքային

ենթակայության 26 ընկերություններ՝ մանկապարտեզ, դպրոց, մշակույթի տուն և այլն: Համայնքապետարանում և նրա ենթակայության տակ գտնվող ընկերություններում աշխատում է 1700 մարդ, որը կազմում է ընդհանուր աշխատունակ բնակչության 21%-ը: Համայնքային ոչ առևտրային կազմակերպության միջոցով, որն ունի ավելի քան 50 աշխատակից, համայնքում իրականացվում է աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքներ:

Համայնքում գործում են նաև մի շարք փոքր և միջին կազմակերպություններ՝ հանրային ծառայությունների մատուցում 568, տրանսպորտային ծառայություններ 12, անշարժ գույքի գործակալություններ 14, շինարարական 19, հանքարդյունաբերական և քարի վերամշակման 66 և այլն:

2.4.2 Արդյունաբերություն և առևտուր

Դիլիջանը հայտնի է իր բուժիչ հանքային ջրերով, որոնք արդեն իսկ 19-րդ դարի վերջից բազմաթիվ հանգստացողներ են գրավել դեպի քաղաքի առողջարանները: Ներկայումս այդ հանքային ջրերը շշալցվում են «Դիլիջան» հանքային ջրերի գործարանում, որը հիմնադրվել է 1947թ.-ին և հանդիսացել է ոչ միայն Հայաստանում, այլև ԽՍՀՄ ողջ տարածքում հանքային ջուր շշալցնող ձեռնարկություններից առաջիններից մեկը: Գործարանը տարեկան արտադրում է ավելի քան 8 մլն. շիշ աղբյուրի հանքային ջուր:

2.4.3 Համայնքի զարգացման ծարգիր

Ըստ ծրագրով սահմանված համայնքի զարգացման տեսլականի՝ Դիլիջան համայնքը միջազգային տուրիզմի և էկոտուրիզմի զարգացման կենտրոն է, բարձր կենսամակարդակ և զբաղվածություն ունեցող բնակչությամբ: Համայնքը տարածաշրջանային ֆինանսական, կրթական կենտրոն է, որտեղ մատուցվում են հանրային որակյալ ծառայություններ:

Այս տեսլականին հասնելու համար համայնքը ծրագրով սահմանել է հիմնական նպատակներ, այն է՝

1. Էկոտուրիզմի զարգացման ենթակառուցվածքների ստեղծում և նոր արդյունքների ձևավորում:
2. Աշխատուժի հմտությունների զարգացում և համապատասխանեցում շուկայի պահանջներին:
3. Զբոսաշրջային արդյունքների ներկայացում և առաջնորդում միջազգային հարթակներում:

Համայնքի տնտեսության հիմնական շարժիչ ուժը զբոսաշրջությունն է: Գեղեցիկ բնությունը և մեղմ կլիմայի շնորհիվ Դիլիջանը երկար ժամանակ համարվել է պասիվ հանգստի և առողջարանային կենտրոն, սակայն օտարերկրյա զբոսաշրջիկների աճին զուգահեռ սկսել է զարգանալ նաև արկածային, էկո և ագրո տուրիզմի ուղղությունները:


Գործողությունների, աշխատանքների ստեղծման և ներդրումային հնարավորությունների առումով Դիլիջանի տնտեսական ներուժի գնահատումը ցույց է

տալիս քաղաքի զարգացման թույլ և ուժեղ կողմերի, հնարավորությունների և վտանգների ընդհանուր պատկերը՝ բացահայտելով քաղաքային ենթակառուցվածքների բացերը և կարիքները՝ բարձրացնելով նրա գրավչությունը, մասնավորապես տնտեսության և տուրիզմի զարգացման համար: Ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և վտանգների վերլուծությունը, հանգեցնում են հնարավոր գործողությունների բացահայտմանը: Հիմնվելով համայնքի տնտեսության վերլուծության վրա, ՏՏԶ պլանի նպատակն է բարելավել բնակչության ապրուստի պայմանները՝ խթանելով համայնքի տնտեսական և տուրիստական զարգացումը: Զարգացնել գյուղական բնակավայրերը, վերածելով գյուղական տուրիզմի կենտրոնների: ՏՏԶ պլանը առանձնացնում է ներդրումային հնարավորություններն այնպիսի ճյուղերում, ինչպիսիք են՝ տուրիզմը, կրթությունը, ինչը կարևոր խթան կհանդիսանա տեղական տնտեսության զարգացման հարցում: Այս տնտեսական ճյուղերին ինստիտուցիոնալ աջակցությունը համարվում է համայնքի հիմնական զարգացման կայուն ռազմավարություն: Ընտրված ռազմավարական ենթակառուցվածքային ծրագրերի ընտրությունն ու իրագործումն անհրաժեշտ են՝ բարելավելու՝ տուրիզմի զարգացման համար:

2.4.4 Զբոսաշրջային ենթակառուցվածք

Համայնքների համաչափ կայուն զարգացմանը միտված և տարաբնակեցման համակարգի հավասարակշռման նպատակով առաջադրվող աճի բևեռների կլաստերի համար նախագծի շրջանակում առաջարկվում է նաև կլաստերի միջուկում/բաղկացուցիչներում նախատեսել զարգացման խթան՝ ճանապարհամերձ զբոսաշրջային համապարփակ մոդուլների ներդրում:

Վերջիններիս համար բաղադրիչների ընդհանրությունից բացի կլինի որոշակի «մասնագիտացվածության» տարբերություններ ևս, ելնելով տարածաշրջանների ընդհանուր տնտեսական ուղղվածությունից և գոյություն ունեցող և հեռանկարային կոնկրետ ռեսուրսային պոտենցիալից:



Ընտրված տիրույթներում տարածաշրջանային տնտեսական աճ

- Արձագանք տարածաշրջանային գործարար համայնքների կարիքներին
- Տեղական, ազգային և համայնքային ֆոնդերի (մասնավորապես՝ կառուցվածքային հիմնադրամների) մոբիլիզացում՝ սահմանված տարածաշրջանային «գործողությունների ծրագրեր»-ի իրականացնելու համար:

Զրոսաշրջությունը Դիլիջանում հիմնականում կրում է սեզոնային բնույթ: Քաղաքում զրոսաշրջային սեզոնը տևում է ապրիլի կեսից մինչև հոկտեմբերի կեսը, ընդ որում հունիս, հուլիս և օգոստոս ամիսները համարվում են պիկային: Զրոսաշրջությունն աշխուժանում է նաև դեկտեմբերի 30-ից հունվարի 9-ն ընկած երկշաբաթյա ժամանահատվածում՝ կապված ամանորյա տոների հետ:

Ներկայումս Դիլիջանը չունի զրոսաշրջային տեղեկատվական կենտրոն:

Քաղաքում առկա են տեսարժան և զրոսաշրջային հետաքրքրություն ներկայացնող մի շարք վայրեր.

- «Թուֆենկյան Հին Դիլիջան» համալիրը՝ վերակառուցված ու բարեկարգված պատմական թաղամասում: Ներկայումս գործում է որպես հյուրանոց՝ ռեստորանով և փոքր խանութով.
- «Դիլիջան» ազգային պարկը՝ 14 հետիոտն երթուղիներ (տես ազգային պարկին նվիրված գլուխը).
- Աղասի Խանջյանի ամառանոցը, կառուցվել է 1936թ.-ին, մասնավոր սեփականություն է, ներկայումս գտնվում է ավերված վիճակում.
- «Մատինովի աղբյուր» հուշաղբյուրը, կառուցվել է 1880թ.-ին գինեվաճառ Մատինովի կողմից.
- «Անտառի արքա» քանդակը, գտնվում է Ա. Խանջյանի ամառանոցի տարածքում: Քանդակագործ՝ Ա. Սարգսյան.
- Հայրենական մեծ պատերազմում զոհված դիլիջանցիների հիշատակին նվիրված հուշարձանը, ստեղծվել է 1975թ.-ին: Հեղինակներ՝ ճարտարապետ Խ. Վաթինյան, քանդակագործ Ս. Մեհրաբյան.
- Հայաստանի խորհրդայնացման 50-ամյակին նվիրված հուշարձանը, հեղինակներ՝ Խ. Վաթինյան, Ա. Թարխանյան, Ս. Ավետիսյան.
- Արցախյան ազատամարտում զոհված դիլիջանցիների հիշատակին նվիրված հուշարձանը, ստեղծվել է 2006թ.-ին Արմեն Աբգարյանի հովանավորությամբ:

2.5 Բնության հուշարձաններ

ՀՀ կառավարության 2008թ. օգոստոսի 14 N967-ն որոշմամբ Տավուշի մարզի տարածքում հաստատվել են բնության ութ հուշարձաններ.

1.	Կովասարի փոխակերպարային թերթաքարեր	Տավուշի մարզ, Բերդ քաղաքից մոտ 20 կմ հարավ՝ Վարագաջուր (Հախում) գետի վերին հոսանքի ավազանում, Վարագաջուրի ձախ վտակ Կառնուտի և Վարագաջուր գետի աջ չոր վտակի հատման կետում, Կառնուտ վտակի հոսանքն ի վեր գնացող գրունտային ավտոճանապարհի աջ կողմում
2.	«Կալաքար» լեռ	Տավուշի մարզ, Մաղկավան գյուղից մոտ 6 կմ հարավ-արևմուտք, Վարագաջուր (Հախում) գետի ձախափնյա անտառապատ լանջին՝ գրունտային ճանապարհի աջ կողմում, 12-13 դարերի Շահմուրադ (Չխմուրադի, կամ Գետակիցք վանքի) վանքային համալիրից մոտ 150 մ դեպի հյուսիս-արևմուտք
3.	«Չինչինի անկյունային աններդաշնակություն»	Տավուշի մարզ, Չինչին գյուղի հվ-արլ եզրին
4.	«Չինչինի սանդղափուլ քարափներ»	Տավուշի մարզ, Չինչին գյուղից ուղիղ գծով 1.5կմ հարավ-արևելք, Հախում գետի աջակողմյան լանջին
5.	«Պլագիոզոբանիտ-պորֆիրային դայք»	Տավուշի մարզ, Բերդ ավանից 6.5 կմ հվ-արմ, Տավուշ գետի ձախ ափին, գետից 5 մ բարձրության վրա
6.	«Քվարցային	Տավուշի մարզ, Հովք գյուղից 900 մ դեպի հս-ալ, Աղստև գետի ձախ ափին,
7.	պլագիոպորֆիրների սյունաձև անջատումներ»	Երևան- Իջևան ավտոմայրուղու ձախ կողմում
8.	«Փայտասար» քարանձավների համալիր	Տավուշի մարզ, Կողբ գյուղից 4 կմ հարավ
9.	«Օձաքար» լեռ	Տավուշի մարզ, Պառավաքար գյուղից 3 կմ (ուղիղ գծով 1 կմ) հյուսիս-արևմուտք, Պառավաքար-Վազաշեն գրունտային ավտոճանապարհի աջ կողմում՝ Պառավաքար լեռնագագաթից 1,5 կմ հարավ-արևմուտք, Կաղնուտաթումբ լեռնագագաթից մոտ 3 կմ հյուսիս-արևելք

2.6 Կենսաբանական հուշարձաններ

1.	«Զորականի սուսի»	Տավուշի մարզ, Զորական գյուղական համայնքի վարչական սահմանում
2.	«Վարդան Մամիկոնյանի կաղնի»	Տավուշի մարզ, Ակնաղբյուր գյուղական համայնք
3.	«Մարի գյուղի սուսի»	Տավուշի մարզ, Մարիգյուղ գյուղական համայնք, Երևան-Նոյեմբերյան ճանապարհից աջ
4.	«Գետահովտի մամռապատ ժայռ»	Տավուշի մարզ, Գետահովիտ Գետահովիտ գյուղից մոտ 1.8 կմ հյուսիս-արևմուտք՝ Մառնաջուր գետի ձախ ափին
5.	«Զիկատարի տանձուտ»	Տավուշի մարզ, «Զիկատար» ուսումնական կենտրոնից հարավ-արևմուտք, 600 մ. «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Նոյեմբերյանի անտառտնտեսության Զիկատարի անտառպետություն
6.	«Ոսկեպարի կենի»	Տավուշի մարզ, «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Նոյեմբերյանի անտառտնտեսության Զուջևանի անտառպետություն, Ոսկեպար համայնքից 6 կմ հարավ-արևմուտք
7.	«Զոնջովուտ»	Տավուշի մարզ, «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Նոյեմբերյանի անտառտնտեսության Դովեղի անտառպետություն, Բարեկամավան համայնքից 1 կմ հարավ-արևմուտք

2.7 Բնական և մշակութային ժառանգություն

Բնական ժառանգության, որպես տուրիզմի և ռեկրեացիայի ռեսուրս, անկրկնելի օբյեկտներ են հանդիսանում Աղավնավանքի կենու պուրակը, Հաղարծնի հաճարկուտները, Խաչարձանի կաղնուտները, Պարզ և Գոշ լճերը:

«Դիլիջան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում, ըստ ՀՀ կառավարության 2004 թ. դեկտեմբերի 30-ի թիվ 1929-Ն որոշմամբ հաստատված պատմամշակութային հուշարձանների պետական ցուցակի, հաշվառված է 473 հուշարձան: Դիլիջան՝ ազգային պարկի կառավարման պլանի մշակման ընթացքում ցուցաբերվել է ընդհանրացված մոտեցում, որի դեպքում առանձին հուշարձաններ միավորվել են խմբերի մեջ: Այսպես, օրինակ՝ Դիլիջան քաղաքի վարչական տարածքում, ըստ վերը նշված ցուցակի, առկա է 72 ազգագրական բնակելի տուն, իսկ կառավարման պլանում դրանք խմբավորված են մեկ թաղամասում: Նույն մոտեցման արդյունքում 473 հաշվառված հուշարձանների փոխարեն ստացվել է 257, որը հուշարձանների պահպանության և շահագործման տեսակետից առավել կառավարելի է: Համաձայն այս մոտեցման Դիլիջան՝ ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում առկա պատմության և մշակույթի հուշարձանները, այդ թվում՝ բնական հուշարձանները, դասակարգվում են^a 2 բնական հուշարձան, 3 քարեդարյան հնավայր, 9 քարայր կացարան, 8 քաղաքատեղի, 51 գյուղատեղի, 2 ազգագրական տների թաղամաս, 13 ամրոց, 4 կամուրջ, 1 մետաղագործական համալիր, 4 եկեղեցի, 4 վանական համալիր, 17 մատուռ, 23 խաչքարերի խումբ, 26 առանձին խաչքար, 4 աղբյուր հուշարձան, 2 երկրորդ համաշխարհայինի հերոսների հիշատակի հուշարձան, 2 դամբարանադաշտ, 48 գերազմանոց: Հուշարձանների ժամանակային բազմազանությունն ընդգրկում է մ.թ.ա. 60-50 հազարամյակից մինչև մ.թ. 20-րդ դարը ընկած ժամանակահատվածը, այսինքն՝ քարե դարի վաղ ժամանակներից մինչև մեր դարաշրջանը: Դրանք հավասարապես սփռված են ազգային պարկի ողջ տարածքով, իսկ ամենախիտ խմբավորումը գտնվում է Աղստև գետի ափերին և դրա վտակների միջին հոսանքում: Անշարժ հուշարձանների 99 %-ը գտնվում է ազգային պարկի բուն տարածքում և միայն 1 %-ը՝ դրա պահպանական գոտում: Ներկայացված հնագիտական և պատմամշակութային հուշարձանների զգալի մասը կարևոր դեր է խաղացել հայ ժողովրդի զարգացման պատմական ընթացքում, հատկապես 12-13-րդ դարերում: Դրանց առկայությունը հնարավորություն է տալիս այստեղ կազմակերպել պատմամշակութային, ուսումնական ու գիտաճանաչողական (հնագիտական, երկրաբանական), էկոլոգիական, էթնոգրաֆիկ և տուրիզմի այլ ձևեր:

5 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Նախատեսվող գործունեությունը իրենից ներկայացնում է շրջակա միջավայրի բնապահպանական կայունության բարձրացման միջոցառում, որը բացառապես դրական կարող է ազդել շրջակա միջավայրի վրա: Շրջակա միջավայրին հասցվող աննշան վնասը կարող է առաջանալ անտառվերականգնման տարածքների ռեիլեֆի նախապատրաստական աշխատանքների ընթացքում:

Մթնոլորտային օդ. Նախատեսվող աշխատանքների ընթացքում կիրառվող ավտոտրանսպորտը և սարքավորումները դառնալու են վնասակար գազերի և փոշու արտանետման աղբյուր: Փոշու արտանետումներ կանխատեսվում են անտառապատման տարածքի ռեիլեֆի նախապատրաստական աշխատանքների ընթացքում:

Այդ նպատակով ծրագրավորվում են մի շարք բնապահպանական կառավարման միջոցառումներ՝

- տարածքի ջրցան առաջացող փոշու նվազեցման նպատակով
- ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար

Ջրային ավազան. Անտառապատման ընթացքում ստորգետնյա և վերգետնյա ջրային ավազանների վրա որևէ ազդեցություն չի լինելու: Ոռոգման գործընթացը կազմակերպվելու է կաթիլային համակարգով:

Բուսական և կենդանական աշխարհ. Նախատեսվող գործունեության աղյուսքում զգալի կբարելավի նախանշված տեղամասերի բուսական և կենդանական աշխարհը: Տարատեսակ տնկիների միջոցով նախատեսվող տեղամասում անտառապատում կիրականացվի, որը բացառապես դրական կազդի տարածաշրջանի բուսական և կենդանական միջավայրի վրա:

Հողային ռեսուրսներ. Հողի բերրի շերտը պահպանելու նպատակով նախատեսվում է առաջնորդվել ՀՀ կառավարության 08.09.2011թ.-ի թիվ 1396-Ն որոշմամբ հաստատված Հողի բերրի շերտի օգտագործման կարգով և 02.12.2017թ.-ի թիվ 1404 որոշմամբ, մասնավորապես նախատեսել հետևյալ միջոցառումները.

- Հողի բերրի շերտը հանել և պահպանել ծածկված վիճակում՝ բացառելով շինարարական աշխատանքների հետևանքով դրա աղտոտումը:
- Հողային աշխատանքների կատարման ընթացքում չօգտագործված հողի հանված բերրի շերտն անմիջապես դարսվում է լայնակույտերով:
- Լայնակույտերի բարձրությունը և ձևը պետք է բացառի հողատարման գործընթացների զարգացումը:
- Եթե հողի հանված բերրի շերտը նախատեսվում է պահել 2 տարին գերազանցող ժամկետով, ապա, ողողումը և հողմատարումը կանխելու համար, լայնակույտերի

մակերևույթն ու թեքությունները ամրացվում են խոտացանքով կամ այլ եղանակներով: Թույլատրվում է լայնակույտի թեքությունների վրա ցանքսը կատարել հիդրոտեղանակներով:

- Հողի հանված բերրի շերտը լայնակույտերում կարող է պահվել մինչև 20 տարի:
- Լայնակույտերը տեղադրվում են գյուղատնտեսության համար ոչ պիտանի տեղամասերում կամ ցածր արդյունավետություն ունեցող հանդակներում՝ բացառելով լայնակույտերի ջրածածկումը, աղակալումը, արդյունաբերական թափոններով և կոշտ առարկաներով, քարերով, խճով, ճալաքարով ու շինարարական աղբով աղտոտումը:

Աղտոտում թափոններով. Աշխատանքների ընթացքում առաջացող թափոնները ժամանակավոր գործունեության հետևանքով առաջացող թափոններ են, որոնք այդ տեղամասերում չեն ենթարկվելու պահման, պահեստավորման և տեղադրման: Հետևաբար անտառապատման տարածքում նախատեսվող գործունեության հետևանքով թափոնների առաջացում չի նախատեսվում:

Անտառապատման աշխատանքների արդյունքում վերը նշված տեղամասը կունենա հետևյալ դրական բնապահպանական նշանակությունները՝

- բնապահպանական;
- ջրապաշտպանական;
- կլիմայակարգավորիչ;
- շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների մեղմացման:

Տնկումների արդյունքում ձևավորվող անտառային մշակույթները կնվազեցնեն փոշու պարունակությունը օդում, մեղմացնելով համայնքի կլիման, ինչպես նաև կնվազեցնեն օդի չորությունը: Դրանք իրար կմիացնեն առանձին անտառահատվածները, ստեղծելով մեկ միասնական անտառ կամ անտառաշերտեր, որտեղ կենսաբազմազանության մաս կազմող միկրոօրգանիզմները, սնկերը, բույսերը, կենդանիները կկարողանան կայուն ձևով գոյատևել, իսկ կենդանիները նաև անարգել կատարել միգրացիաներ համայնքի տարբեր անտառահատվածներում:

Արտակարգ և վթարային իրավիճակներ

Բնական աղետների (երկրաշարժ, սողանքներ, ջրհեղեղ և այլն), ինչպես նաև տեխնոլոգիական վթարների ժամանակ աշխատանքները պետք է դադարեցվեն, հոսանքազրկվեն բոլոր էլեկտրական սարքերը (եթե այդպիսիք լինեն), սպասարկող անձնակազմը շտապ տեղափոխվի անվտանգ վայր:

Երևույթների և իրավիճակի մասին անմիջապես տեղեկացվում են արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Դիլիջան քաղաքի ստորաբաժանման պատասխանատուները և տեղական ինքնակառավարման մարմինները:

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ

№	Մշտադիտարկումների օբյեկտը	Մշտադիտարկումների վայրը	Ցուցանիշը	Մշտադիտարկումների տեսակը	Նվազագույն հաճախականությունը
1	Գենասաբազմազանություն /բույսեր/	Անտառապատման տեղամասեր	Ֆլորայի՝ բույսերի տեսակների կազմի ու բուսականության՝ համակեցության փոփոխություն	Տնկված ծառերի և թփերի աճման ինտենսիվությունը, չորացած կամ միջատներով ու սնկերով վարակված ընձյուղների առկայությունը, չորացած ծառերի կամ թփերի առկայություն, ոռոգման ռեժիմի ազդեցության դիտարկում	Ծառատնկումներից հետո յուրաքանչյուր հաջորդ տարվա մեջ երկու անգամ
2	Գենասաբազմազանություն /կենդանիներ/	Անտառապատման տեղամասեր	կենդանական աշխարհի տեսակային կազմի փոփոխությունը, տեսակների հաշվառում	Կենդանիների տեսակային բազմազանության դիտարկում, միջատներով վարակված բույսերի առկայություն	Ծառատնկումներից հետո յուրաքանչյուր հաջորդ տարվա մեջ երկու անգամ
3	Գենասաբազմազանություն /սնկեր/	Անտառապատման տեղամասեր	գլխարկավոր սնկերի, ինչպես նաև բույսի վրա վարակիչ սնկերի կազմի փոփոխություն	Մսկերի տեսակային բազմազանության դիտարկում սնկերով վարակված բույսերի առկայություն	Ծառատնկումներից հետո յուրաքանչյուր հաջորդ տարվա մեջ մեկ անգամ
4	Հողային ծածկույթ	Անտառապատման տեղամասեր	Հողի բերրի շերտի հզորության, խոնավության ու կազմի փոփոխություն, հողի տեքստուրայի որոշում, հումուսի պարունակության փոփոխություն, էռոզիայի աստիճանի փոփոխություն	Հողի պրոֆիլի չափում, նմուշառում և նմուշի լաբորատոր հետազոտություն, Չափումներ, չափագրումներ	Տարին մեկ անգամ՝ ընդգրկելով տարվա տարբեր եղանակներ

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մթնոլորտային արտանետումների գույքագրման ձեռնարկ, ЕМЕР/ЕЕА, 2009:
2. СН 245-71. Санитарные нормы проектирования промышленных предприятий.
3. СНиП 1.02.01-85 Инструкция о составе, порядке разработки, согласования и утверждения проектно-сметной документации на строительство предприятий, зданий и сооружений.
4. СНиП 2.04.02-84. Водоснабжение. Наружные сети и сооружения.
5. Сборник методик по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ различными производствами, Госкомгидромет, Ленинград, 1986.
6. Инструкция о порядке рассмотрения, согласования и экспертизы воздухоохраных мероприятий и о выдаче разрешений на выброс загрязняющих веществ в атмосферу по проектным решениям, ОНД-84-Н.
7. Укрупненные нормы водопотребления и водоотведения для различных отраслей промышленности, Стройиздат, Москва, 1982г.
8. Временное методическое пособие по расчету выбросов от неорганизованных источников в промышленности строительных материалов, МИНПРОМСТРОЙ СССР, Москва 1984г.
9. Нормы расхода топлив и смазочных материалов на автомобильном транспорте.
10. Нормы расхода жидкого топлива для машин, эксплуатирующихся в предприятиях уборки городских территорий, санитарной очистки и ремонтно-строительном производстве.
11. "Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին" ՀՀ օրենքը, ընդունված 2006 թվականի դեկտեմբերի 20-ին:
12. ՀՀ Կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի "նակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին" թիվ 160-Ն որոշում:
13. Հայաստանի բույսերի Կարմիր Գիրք.– 2010թ.
14. Հայաստանի կենդանիների Կարմիր Գիրք.– 2010թ.
15. 29.01.2010թ. «ՀՀ կենդանիների կարմիր գիրքը հաստատելու մասին» թիվ 71–Ն և
Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումն
16. 29.01.2010թ. «ՀՀ բույսերի կարմիր գիրքը հաստատելու մասին» թիվ 72–Ն որոշումն

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ



REPUBLIC OF ARMENIA

TAVUSH MARZ

CITY HALL OF DILIJAN

3901, Դիլիջան, Մյասնիկյան 55
Հեռ՝. (+374 268) 2-25-85,
Էլ. հասցե՝ dilijan1@yahoo.com

3901, Myasnikyan str. 55, Dilijan
Tel: (0268) 2-25-85;
E-mail: dilijan1@yahoo.com

16 Ապրիլ, 2021

Կ.Վարդանյանի լիազորված անձ Ա.Գասպարյանին

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /21.06.2014թ. ՀՕ-110-Ն/, ինչպես նաև ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով (առաջին փուլ) 2021թ. ապրիլի 2-ին ժամը 12:00-ին ՀՀ Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքապետարանի վարչական շենքում տեղի ունեցած «Դիլիջան» ազգային պարկի «Դիլիջան տեղամաս» մասնաճյուղի 1 քառակուսու 6 անտառամասում անտառապատման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հանրային քննարկման արդյունքներից ելնելով՝ Դիլիջանի համայնքապետարանը որոշում է և տալիս է իր համաձայնությունը նշված ծրագրի իրականացման վերաբերյալ:

ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Դ.ՍԱՐԳՍՅԱՆ



Նոտարական ակտի կոդ: 494-20201026-37-4779204
Նոտարական ակտի գաղտնագիր: 9XVCJR



Պ Ա Յ Մ Ա Ա Ն Ա Գ Ի Ր

<<Դիլիջան>> ազգային պարկի տարածքներից հողամասի վարձակալության մասին
ք.Դիլիջան, երկու հազար քսան թվականի հոկտեմբերի քսանյոթին

Հայաստանի Հանրապետությունը, ի դեմս «ԴԻԼԻՋԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿ» Պետական ոչ առևտրային կազմակերպության, հասցե՝ ԴԻԼԻՋԱՆ Թբիլիսյան խճուղի, գրանցման համար՝ 21.210.00428, ՀՎՀՀ՝ 07610657, տնօրենի պարտականությունները կատարող՝ **ԱԴԱՄ ՎԱՆՈՅԻ ՊՈՂՈՍՅԱՆԻ**, ծնված՝ 11/08/1965, ՀԾՀ՝ 2108650113, անձնագիր՝ AK0520540, տրված՝ 036-ի կողմից 07/06/2010թ-ին, հաշվառված՝ ՀԱՂԱՐԾԻՆ 5 Փ. / 77 / հասցեում, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա մի կողմից, /այսուհետ վարձատու/, և **ՎԱՐԵՆ ՀՐԱՆՏԻ ՎԱՐՈՒՆՅԱՆԸ**, ծնված՝ 30/11/1976թ-ին, ՀԾՀ՝ 4011760064, կենսաչափական անձնագիր՝ BA3153050, տրված՝ 006-ի կողմից, 15/01/2018թ-ին, հաշվառված՝ ԵՐԵՎԱՆ, ԿԵՆՏՐՈՆ, ԲԱՅՐՈՆԻ Փ., 3 Ե, 36ԲՆ, որի անունից համաձայն "Երևան" նոտարական տարածքի նոտար Մ.Սարգսյանի կողմից 30/07/2020թ-ին վավերացված թիվ 3080 լիազորագրի հանդես է գալիս **ԱՐՄԵՆ ՈՒՐԲԵՆԻ ԳԱՄՊՐՅԱՆԸ**, ծնված՝ 25/11/1984թ-ին, ՀԾՀ՝ 3511840830, անձնագիր՝ AN0765118, տրված՝ 003-ի կողմից, 17/12/2013թ-ին, հաշվառված՝ ԵՐԵՎԱՆ, ՇԵՆԳԱՎԻԹ, Գ. ՆՏՂԵՀԻ Փ., 30 Ե, 23ԲՆ հասցեում, /այսուհետ վարձակալ/, հետագայում Կողմեր, հիմք ընդունելով Բնության հատուկ պահպանվող տարածքների հողամասերը վարձակալության և/ կամ կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով ստեղծված միջգերատեսչական մրցույթային հանձնաժողովի 09.10.2020թ-ի թիվ 4-1 արձանագրությունը, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

I Պայմանագրի առարկան

1. Սույն պայմանագրին համապատասխան վարձատուս վարձակալին համապատասխան վճարի դիմաց նրա տիրապետմանը և օգտագործմանն է տրամադրում <<Դիլիջան>> ազգային պարկի /այսուհետ պարկ/ ռեկրեացիոն գոտում գտնվող <Դիլիջան> տեղամաս> մասնաճյուղի 1 քառակուսու 6 անտառամասից 1.9 հա ընդհանուր մակերեսով տարածքը՝ համաձայն սույն պայմանագրի 1 հավելվածի, որը հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը (այսուհետ վարձակալված տարածք կամ վարձակալված հողամաս):
2. Հողամասը տրամադրվում է վարձակալության իրավունքով, մրցույթային՝ կարգով: Վարձատուն երաշխավորում է, որ սույն պայմանագրի կնքման պահին գույքը վաճառված, նվիրված կամ գրավ դրված չէ և արգելանքի տակ չի գտնվում, որը հաստատված է ՀՀ Կադաստրի Կոմիտեի կողմից տրված թիվ US-20102020-11-0076 միասնական տեղեկանքով, տրված 20.10.2020թ.
3. Վարձակալի միջոցների հաշվին և վարձատուի համաձայնությամբ կատարված վարձակալված տարածքի անբաժանելի բարելավումները, սույն պայմանագիրը դադարելուց հետո, համարվում են վարձատուի սեփականությունը՝ առանց բարելավումների արժեքի հատուցման:

II Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

4. Վարձակալն իրավունք ունի՝
 - 4.1. Տիրապետել և օգտագործել վարձակալված հողամասը պարկի տարածագործառնական գոտու սահմանված ռեժիմին, սույն պայմանագրին և հողի նպատակային նշանակությանը համապատասխան.
 - 4.2. Վարձատուի համաձայնությամբ կատարել վարձակալված տարածքի անբաժանելի բարելավումներ:
 - 4.3 Միայն վարձատուի համաձայնությամբ և նրա կողմից սահմանված պայմաններով ու ժամկետներով վարձակալված հողամասը ենթավարձակալության հանձնելու երրորդ անձի:
 - 4.4 Վարձատուի կողմից պայմանագիրը միակողմանի վաղաժամկետ լուծվելու դեպքում պահանջելու իրեն պատճառված վնասների դիմաց հատուցում, եթե պայմանագրի միակողմանի վաղաժամկետ լուծումը պայմանավորված չէ վարձակալի կողմից սույն պայմանագրի պահանջների խախտման հետ:
 5. Վարձակալը պարտավոր է՝
 - 5.1. Ժամանակին և սույն պայմանագրով սահմանված կարգով մուծել հաշվարկված վճարը.
 - 5.2. Ժամանակին և սահմանված կարգով ապահովել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ու սույն պայմանագրով նախատեսված հողամասի օգտագործմանը ներկայացվող պահանջներն ու պահպանման միջոցառումները:
 - 5.3. Խստորեն պահպանել պարկի տարածագործառնական գոտու սահմանված ռեժիմը.
 - 5.4. Բացառել ինքնուրույնաբար բույսերի և կենդանիների նոր տեսակների ներմուծումը և կլիմայավարժեցումը, վնասատուների դեմ պայքարի նպատակով թունաքիմիկատների և հողերի պարարտացման նպատակով անօրգանական պարարտանյութերի օգտագործումը.
 - 5.5 Թույլ չտալ վարձակալված հողամասի այնպիսի փոփոխություն, որը կհանգեցնի հողի որակական հատկանիշների վատթարացմանը.
 - 5.6 Առանց վարձատուի համաձայնության չկատարել վարձակալված տարածքի անբաժանելի բարելավումներ.
 - 5.7 Վարձակալության պայմանագիրը դադարելու դեպքում վարձատուին վերադարձնել վարձակալված հողամասը՝ այդ թվում իր կողմից կատարած հողամասի անբաժանելի բարելավումները.
 - 5.8 Սույնով, Կողմերը հաշվի առնելով ՀՀ Կառավարության 18.12.2008թ. թիվ 1578-Ն որոշմամբ ստեղծված մրցութային հանձնաժողովի 09.10.2020թ. նիստի արձանագրության պահանջը համաձայնվում են, որ վարձակալի կողմից իրականացվի ծառատունկ:
 - 5.9. Վարձակալը պարտավորվում է սույն պայմանագիրը կնքման և նոտարական վավերացման օրվանից երեսուն օրյա ժամկետում ներկայացնել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի համապատասխան

տարածքային ստորաբաժանում՝ իրավունքների պետական գրանցման համար, ինչպես նաև իր ֆինանսական միջոցների հաշվին կատարել սույն պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված բոլոր ծախսերը, այդ թվում՝ վճարել պետական տուրքը:

6. Վարձակալին արգելվում է ինքնակամ կերպով վարձակալության իր իրավունքը լրիվ կամ մասնակիորեն երրորդ անձին փոխանցել կամ գիջել, հողը կամ դրա նկատմամբ գույքային իրավունքները գրավ դնել, իրավաբանական անձի կանոնադրական կապիտալը ներդնել կամ հողամասն օգտագործման իրավունքով /հատուցմամբ կամ անհատույց/ երրորդ անձի տրամադրել:

7. Վարձատուն իրավունք ունի:

7.1. Վարձակալից պահանջել ապահովել պարկի տարածագործառնական գոտու սահմանված ռեժիմը, հողն օգտագործել սույն պայմանագրով սահմանված նպատակներով և պայմաններին համապատասխան, պահպանելու հողի օգտագործման նկատմամբ սահմանափակումները, իրականացնելու հողի բարելավման միջոցառումներ:

7.2. Վարձակալի կամ նրա ներկայացուցչի հետ միասին մուտք գործելու վարձակալած հողամաս՝ վարձակալի կողմից սույն պայմանագրի պահանջների կատարումը, հողամասի օգտագործման պայմանները հսկելու նպատակով, չխոչընդոտելով վարձակալի բնականոն գործունեությունը:

7.3. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն պայմանագրով սահմանված դեպքում ու կարգով վաղաժամկետ լուծելու պայմանագիրը:

7.4. Օգտվելու Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ իրավունքներից:

7.5 Հողամասի վարձակալության ժամկետն ավարտվելուց կամ պայմանագիրը վաղաժամկետ լուծվելուց հետո իր հայեցողությամբ տնօրինելու հողամասի անբաժանելի բարելավումները և ամրակայված գույքը :

8. Վարձատուն պարտավոր է՝

8.1. Չմիջամտել վարձակալի տնտեսական գործունեությանը, եթե այն վնաս չի պատճառում շրջակա միջավայրին և չի խախտում պարկի տարածագործառնական գոտու սահմանված ռեժիմը, այլ անձանց իրավունքներն ու օրինական շահերը:

9. Սույն պայմանագրի գործողության ժամկետում վարձակալի կողմից իրականացված գույքի բաժանելի և անբաժանելի բարելավումների կորուստի ռիսկը կրում է վարձակալը:

III. Վարձավճարը

10. Հողամասի տարեկան վճարը կազմում է՝ 1.140.000 /մեկ միլիոն հարյուր քառասուն հազար/ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ, որի չափը չի կարող պակաս լինել հողի հարկի տարեկան դրույքաչափից:

11. Հողի կադաստրային արժեքի փոփոխման դեպքում վարձատուն պարտավոր է նոր կադաստրային արժեքի մասին նախորդ գրավոր տեղյակ պահել վարձակալին, ներկայացնելով համապատասխան հիմքերը: Հողի կադաստրային արժեքի աճի դեպքում նոր կադաստրային արժեքի հիման վրա հաշվարկված վարձավճարի չափը ենթակա է կիրառման ոչ շուտ, քան դրա մասին գրավոր տեղեկացվելուց 15 օր անց: Վարձավճարը չի փոփոխվում, եթե վարձակալը մինչև համապատասխան 15 օրյա ժամկետի ավարտը գրավոր կարգով վարձատուն ծանուցել է պայմանագրի վաղաժամկետ լուծման մասին: Սույն կետով նախատեսված հիմքով վարձավճարի փոփոխման հետևանքով լրացուցիչ վճարվելիք գումարը Վարձակալը պարտավորվում է վճարել սույն կետով նախատեսված գրավոր տեղեկացումը ստանալուց հետո 30 օրյա ժամկետում:

12. Բացառությամբ սույն պայմանագրի 11-րդ կետով նախատեսված դեպքերի, վարձավճարի չափը կարող է փոփոխվել միայն սույն պայմանագրի կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ:

13. Վարձակալական վճարը վարձակալի կողմից մուծվում է Երևանի թիվ 1 գանձապետարանի 900018003856 հ/հ-ին պայմանագրի կնքման օրվանից մեկ ամսվա ընթացքում:

14. Վարձատուն սույն պայմանագրի 13 կետում նշված հաշվարկային հաշվի կամ վճարումների կատարման կարգի փոփոխման մասին նախապես տեղյակ է պահում վարձակալին:

IV. Տույժերը և տուգանքները

15. Վարձակալի կողմից, սույն պայմանագրով սահմանված ժամկետներում, վճարումներ չկատարելու դեպքում կետանցի յուրաքանչյուր օրվա համար վճարվում է տույժ՝ տարեկան նախատեսված վճարի գումարի 0.2 տոկոսի չափով:

V. Պայմանագրի ժամկետները

16. Սույն պայմանագիրը կնքվում է 60 /վաթսուս/ տարի ժամկետով և ուժի մեջ է մտնում պետական գրանցման պահից:

17. Պայմանագրի ժամկետը կարող է երկարաձգվել կողմերի համաձայնությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքում և կարգով:

18. Սույն պայմանագրով սահմանված ժամկետի ավարտից հետո՝ վարձակալված հողամասի տիրապետումն ու օգտագործումը վարձակալի կողմից չդադարեցվելը և դրա հետևանքները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ:

VI. Պայմանագրի դադարեցումը

19. Սույն պայմանագիրը լուծվում է՝

19.1. Պայմանագրի ժամկետը լրանալու դեպքում:

19.2 Կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

19.3 Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքում և կարգով պայմանագիրը վաղաժամկետ լուծվելու դեպքում:

20. Սույն պայմանագիրը վարձակալի կողմից կարող է միակողմանի վաղաժամկետ լուծվել՝

20.1. Եթե հողը վարձակալից անկախ պատճառով դարձել է օգտագործման համար ոչ պիտանի:

20.2. Ցանկացած այլ հիմքերով՝ դրա մասին մեկ ամիս առաջ գրավոր ծանուցելով վարձատունին:

20.3 Սույն պայմանագրի 11-րդ կետում նշված կադաստրային արժեքի ձևավորման արդյունքում վարձավճարի չափի փոփոխման դեպքում:

21. Սույն ամսվանագիտ դադարեցումի կողմից կարող է միակողմանի վաղաժամկետ լուծվել՝

- 1. Եթե վարձակալած հողամասն օգտագործվում է ոչ նպատակային և խախտվում են օգտագործման պայմանները:
- 21.2. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված հիմքերով՝ սույն պայմանագրի խախտումների դեպքում:
- VII . Անհաղթահարելի ուժի ազդեցությունը
- 22. Սույն պայմանագրով անհաղթահարելի ուժ ասելով հասկացվում է ջրհեղեղ, պայթյուն, ֆինանսական ճգնաժամ, հրդեհ, երկրաշարժ և այլ տարերային աղետներ, պատերազմ, ռազմական գործողություններ, զինված հարձակում, զանգվածային անկարգություններ, մայրուղային խողովակաշարի վթար կամ նման այլ իրադաժություններ:
- 23. Կողմերն իրենց պարտականությունները մասնակիորեն կամ լրիվ չկատարելու համար ազատվում են սույն պայմանագրով սահմանված պատասխանատվությունից, եթե դա կատարվել է սույն պայմանագիրը կնքելուց հետո ծագած այնպիսի անհաղթահարելի ուժի հետևանքով, որը կողմերը չէին կարող կանխել կամ կանխագուշակել, որի պատճառով վարձակալը չի կարող շարունակել հողի բնականոն օգտագործումը:
- 24. Անհաղթահարելի ուժի ազդեցության ժամանակահատվածը երեք ամսվանից ավելի երկարաձգվելու կամ դրա հետևանքները վեց ամսվա ընթացքում չվերացվելու դեպքում կողմերը պետք է ընդունեն սույն պայմանագրի շարունակման մասին որոշում:
- VIII . Եզրափակիչ դրույթներ
- 25. Սույն պայմանագիրը կնքվում է 5 հավասարազոր օրինակից, որոնցից մեկական օրինակ պահվում է կողմերի մոտ, մեկական օրինակ հանձնվում է անշարժ գույքի գրանցման լիազոր պետական մարմնին և նոտարական գրասենյակ:
- 26. Սույն պայմանագիրը պարտադիր է կողմերի իրավահաջորդների համար:
- 27. Կողմերի միջև ծագած տարաձայնությունները լուծվում են փոխադարձ համաձայնությամբ կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
- Կողմերի վավերապայմանները

Վարձատու
 Հայաստանի Հանրապետություն
 «Դիլիջան» ազգային պարկ ՊՈԱԿ
 ք.Դիլիջան Թբիլիսյան խճ. 2
 Երևանի թիվ 1 գանձապետարան
 հ/հ 900018003856
 ՀՎՀՀ 07610657
 Տնօրենի պարտականությունները
 կատարող Ա.Պողոսյան

Վարձակալ
 Կարեն Հրանտի Վարդանյան
 լիազորված անձ՝ Արսեն Ռուբենի Գասպարյան
 անձ. AN07655118, տրված 17.12.2013թ. 003
 հասցե, ք. Երևան, Գ. Նժդեհի. 30շենք, բն. 23

Կարեն Վարդանյան

Արսեն Ռուբենի Գասպարյան



Երկու հազար քսան թվականի հոկտեմբերի քսանյոթին
 Սույն պայմանագիրը վավերացված է իմ "Տավուշի մարզ" նոտարական տարածքի նոտար՝ Ալբերտ Եգանյանիս
 կողմից:
 Կողմերը պայմանագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ:
 Կողմերի ինքնությունը, նրանց գործունակությունը, ինչպես նաև անշարժ գույքի նկատմամբ կողմերի իրավունքները
 ստուգված են:
 ԳՐԱՆՑՎԱԾ Ե ՍԵՂԱՆԱՄԱՏՅԱՆՈՒՄ 1649 թվ

Գանձված է պետական տուրք հինգ հարյուր ՀՀ դրամ և ծառայության վճար տասը հազար ՀՀ դրամ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար *Ալբերտ Եգանյան* Ալբերտ Ռազմիկի Եգանյան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԿԱՅԱԿԱՆ
 ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
 ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ



Սույն վկայականով հաստատվում է 31 մարտի 2021 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

ԿԱՐԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ ՀՐԱՆՏԻ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Տավուշ, համայնք Դիլիջան քաղաք Դիլիջան Դիլիջան տեղամաս մասնաճյուղի 1 քառակուսու 6 անտառամասից

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Վարձակալության պայմանագիր 27.10.2020թ. հ 1649

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 11-003-0623-0049

Մակերեսի չափը (հա)՝ 1.9

Նպատակային նշանակությունը՝ անտառային

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Անտառ

Գրանցված իրավունքի տեսակը՝ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ N 31032021-11-0044, գաղտնաբառ՝ DLAYS98PYCC

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

- 1) Նպատակային նշանակությունը՝
- 2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Վարձակալության է տրված 60 տարի ժամկետով:
 Սույն վկայականը հանդիսանում է N 30102020-11-0005, գաղտնաբառ՝ XSGABI7A3WI6 վկայականի ուղղված տարբերակը:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ ԳԱԳԻԿ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի ավագ ռեգիստր

ՎԿԱՅԱԿԱՆ N 31032021-11-0044, գաղտնաբառ՝ DLAYS9BPYYC

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով



Նոտարական ակտի կոդ: 551-20200730-90-4644762
Նոտարական ակտի գաղտնագիր: NBYVXW



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՆՈՏԱՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔ
ԵՐԵՎԱՆ, ԵՐԵՐՈՒՆԻ ԱՐՑԱԽԻ ՊՈՂ.14Ծ., ԾԻՆ.156, ՀԵՌ. 010-43-09-49
ԼԻԱԶՈՐԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան,
երկու հազար քսան թվականի հուլիսի երեսուկին

Ես՝ **ԿԱՐԵՆ ՀՐԱՆՏԻ ՎԱՐԴԱՆՅԱՆՍ**,
ծնված՝ 30/11/1976թ-ին, ՀԾՀ՝ 4011760064,
կենսաչափական անձնագիր՝ BA3153050, տրված՝ 006-ի կողմից, 15/01/2018թ-ին,
հաշվառված՝ ԵՐԵՎԱՆ, ԿԵՆՏՐՈՆ, ԲԱՅՐՈՆԻ Փ., 3 Շ, 36ԲՆ
լիազորում եմ **ԱՐՄԵՆ ՌՈՒԲԵՆԻ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ**,
ծնված՝ 25/11/1984թ-ին, ՀԾՀ՝ 3511840830,
անձնագիր՝ AN0765118, տրված՝ 003-ի կողմից, 17/12/2013թ-ին,
հաշվառված՝ ԵՐԵՎԱՆ, ԾԵՆԳԱՎԻԹ, Գ. ՆԺԴԵՀԻ Փ., 30 Շ, 23ԲՆ

Հայաստանի Հանրապետությունում իմ անվամբ և իմ փոխարեն, իր նախընտրած պայմաններով և իր ցանկությամբ վարձակալել ցանկացած անշարժ գույք: Լինել իմ ներկայացուցիչը, իմ փոխարեն հանդես գալ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում, համապատասխան տարածքային ստորաբաժանման համապատասխան սպասարկման գրասենյակում, նոտարական գրասենյակում, ցանկացած ընկերությունում բանկում, քաղաքապետարանում և նրա համապատասխան ստորաբաժնումներում, վարչական շրջանում, արխիվներում, հարկային մարմիններում, ցանկացած Կապի ծառայություններում, «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերությունում, Էլեկտրոնային «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությունում, «Դիլիջանի Ազգային Պարկ» ՊՈԱԿ-ում, «Հայաստառ» ՊՈԱԿ - ում, պետական և ոչ պետական մարմիններում:

Իմ անունից ստորագրել վարձակալության պայմանագրերը, վարձակալության պայմանագրերում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին համաձայնագրեր, իմ անունից տալ հայտարարություններ և դիմումներ (այդ թվում՝ կապված գույքի գրանցման հետ), ներկայացնել և ստանալ անհրաժեշտ փաստաթղթեր, տեղեկանքներ, այդ թվում՝ գույքի միավորի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ, անդորրագրեր, թույլտվություններ, որոշումներ, կրկնօրինակներ, քաղվածքներ, վկայականներ, վկայագրեր, հարկ եղած դեպքում լուծել կնքված պայմանագրերը և համաձայնագրերը, փաստաթղթերում կատարված սխալները ներկայացնել ուղղման և հաստատման, կատարել ցանկացած փաստաթղթերի ձևակերպումներ՝ լիազորագրից բխող այլ գործողություններ, ստորագրել իմ փոխարեն և կատարել բոլոր գործողությունները, որոնք կապված են տվյալ հանձնարարության հետ:

2. Իմ անունից և իմ փոխարեն ստորագրել աշխատանքների կատարման ու ծառայությունների մատուցման վերաբերյալ համապատասխան պայմանագրեր՝ կապված Երևան քաղաքի Բայրոնի 3 (երեք) հասցեում նոր վերելակի տեղադրման և այն համապատասխան պետական մարմնում գրանցելու հետ:

Լիազորագրի բովանդակությունը, էությունը, նշանակությունը, ինչպես նաև իրավական հետևանքները նոտարի կողմից բացատրվել է, ինձ պարզ է, և համապատասխանում է իմ ցանկությանը:

ԼԻԱԶՈՐԱԳԻՐԸ ՏՐՎՈՒՄ Է ԵՐԵՔ ՏԱՐԻ ԺԱՍԿԵՏՈՎ:

ԼԻԱԶՈՐՈՂ

Handwritten signature in blue ink

Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան,
Երկու հազար քսան թվականի հուլիսի երեսունին
Սույն լիազորագիրը վավերացված է իմ Հայաստանի Հանրապետության «Երևան»
Նոտարական տարածքի նոտար՝ Մարինե Մարատի Սարգսյանիս կողմից: Լիազորագիրը
ստորագրված է լիազորողի կողմից իմ ներկայությամբ: Լիազորողի ինքնությունը ստուգված
է, գործունակությունը՝ պարզված:
Գրանցված է գրանցամատյանում No *3080* ով

Գանձված է պետական տուրք հինգ հարյուր ՀՀ դրամ և ծառայության վճար երկու հազար ՀՀ
դրամ՝ համաձայն Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքների:

Նոտար

Մարինե Մարատի Սարգսյան



Handwritten signature in blue ink



